




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3916-

891.71-31

2-14

~~495~~

1306.

20
11

~~522~~ ~~553~~

Q 13

2011

2003

891.71

2-14

u

ԱԶՏՈՆԻ ԸՆՏԱՆԻՔԸ

ՆԱԴԵԺԴԱ Վ...Ի

2-4 12

9-17
6499

ՎԵՊԸ

Թարգմանությունն տ. Ն. Ա...ի

2-17



Թ Ի Ֆ Լ Ի Զ

Ի ՏՊԱՐԱՆԻ Հ. ԻՆՏԻԱՆՔԻՆԻ ԵՒ ԸՆԴՈՒՆԱԿԱՆ

1868



1180

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ 30 СЕНТЯБРЯ 1868 Г.
ТИФЛИСЪ.



3485

40

ԱՇՏՈՆԻ ԸՆՏԱՆԻՔ.

Էդուարդ, 'ի սէրն Աստուծոյ, ասա՛ ինձ բոլորն, երևի գործերդ շատ վատ են գնում... դու շատ նեղացած ես. մի խաբիր ինձ, խնդրեմ բոլորն ասա՛, ասում էր ջահել կիներ, սեղմելով ձեռք բարձրահասակ և պատուելի դէմքով մարդու : Սա նստած էր բազկաթոռի վերայ, աչքերը դցած վառարանին : Կիներ թեկն ընկաւ թաւիշեայ բարձի վերայ, որ դրած էր նորա ոտի տակ, և աշխտտում էր ուղիղ նայելու նորա աչքերին, սոցա մէջ իր ցանկացած պատասխանը դուշակելու համար :

Ես նորան անուանեցի մատաղահաս կնիկ, նա երեսուն և երեք տարեկան էր. բայց սուր և քնքոյշ գծերը և գեղեցիկ երեսի զուարթութիւնը, հազիւ ներում էին նրան քսան և հինգ տարեկան համարել : Մոյգ մետաքսէ շորը, գեղեցիկ կերպով պատում էր նորա ծկուն, և նազելի հասակը : Փոքրիկ պատառեայ

գլխարկը վարդագոյն ժապաւեններով ծածկում էր թան-
ձրը և շագանակագոյն մազերը, որոնք ձոխու թեամբ ծա-
ծանվում էին երկու այտերու վրայ : — Սենեակի կարգը
վկայում էր տիրոջ հարստութեան և ընտիր ճաշակին :

— Ես ոչ մի ժամանակ չեմ խաբել քեզ, Հեղինէ,
պատասխանեց Էդուարդը : — « Եւս առաւել չեմ խաբիլ
հիմա, երբ որ ամենեին անօգուտ է, երբ որ հարկաւոր
է ինձ քո քաջալերութիւնը և մխիթարանքը

— Ի՞նչ էին խօսում վաճառատանը :

— Որոնք աւելի խիստ էին, նոքա մեղադրում էին ինձ,
որ ես անհաշիւ եմ և անզգոյշ. նոքա ապացուցա-
նում էին, որ չը պէտք է աշխարհումս ոչ ոքի համար
երաշխաւոր լինել, իսկ ներողամիտները ցաւում էին իմ
վերայ :

— Մի՞թէ ոչ ոքից յոյս չկայ օգնութեան :

Այո, ոքից :

— Բայց Էնշաուն ի՞նչ է ասում :

— Նա ինքն կորցնում է յիսուն հազար Գիլէի օր-
նանկութեամբ :

— Բայց Հա՞րվէին :

— Չե՞նամուխ է լինում մի այնպիսի մեծ գործի, ո-
րի համար նորա գումարը փոքր է :

— Բի՞րկենֆէլտը .

— Այո մի ժամանակ ոչ ոքին չէ օգնում : — 'Ի զուր
մի աշխատիր մէկ մէկ անուանելու մեր բարեկամնե-

բուն, Հեղինէ— ես արդէն փորձեցի: Ոչ մէկից ոչինչ չէ
կարելի սպասել, մէկ քանիսը չեն կարող օգնել, միւս-
ները չեն ուզում: Բոլորովէն կործանվեցանք: Խեղճ,
ասաց նա մօտանալով դէպի իւր կիներ, և համբու-
րելով նորա ճակատը. «խեղճ երեխերք»:

Նա ձեռները դարսեց ծնկան վերայ խաչաձև և
դու իւր քաշ արեց. մէկ քանի բոպէ երկուսն էլ լուռ
էին, վերջապէս կիներ բարձրացրեց աչքերը և ասաց.

— Ի՞նչ պէտք է անենք մենք, Լիւսարդ:

— Դու պահանջում էիր, որ ես ամէնը ասեմ քեզ,
Հեղինէ. ինձ կ'նստացնեն բանդը....

— Բանտը, ասաց նեղանալով խեղճ կիներ:

— Այո՛ բանտումը: Պարտքիս թիւը շատ է իմ ու-
նեցածից: Մի լաց լինիր, Հեղինէ, դու հաստատ բնու-
թիւն ունեցող կին ես, ցոյց տուր հիմակ այդ:

— Բանտը, կրկնեց նա, ճնշելով իր հեկեկանքը:

— Հեղինէ, ես գնում եմ բանտը ոչ թէ ինչպէս չար
անանկ, ինչպէս յանցաւոր. այս ինչոր պատահեցաւ ինձ,
կարող է ուրիշն հետ էլ պատահել: Գիլը այնպէս հա-
րուստ էր, բաները ուղիղ երևում էին: Միայն ես չէի
երաշխաւոր, մենք երեք հողի ենք կորչում: Ես դրե-
թէ համոզված եմ, որ Գիլը անպատիւ փարուեցաւ...
որ նորա անանկութիւնը... Բայց է՛հ Աստուած նորա
հետ. սրանից թեթեւութիւն չի լինել:... Մենք յանձն
առանք, ուրեմն պատասխանում ենք նորա տեղ, ու-

րեմն գնում ենք բանտը, օրէնքը այսպէս է հրամայում :
Աստուած թող դատէ նրան, թէ որ մեր քամբաղ-
տութիւնը, թէ որ քո արտասուքները կ'ընկնեն նորա
խղճմտանքի վերայ :

— Հեղինէն լուռ հեկեկում էր :...

— Ների՛ր ինձ Հեղինէ, — ասում էր Էդուարդը, ես
մեղաւոր եմ քեզ մօտ. ես չը պէտք է խաղայի քո հան-
գստութեան և մեր երեխանցը բարօրութեան հետ,
բայց գործը ուղիղ էր երևում, վաստակը մեծ և ան-
յաջողութիւնը անհնարին :... Հեղինէ, ես իմ արիւնովս
պատրաստ էի ջնջելու քո արտասուքները :

Հեղինէն շուտով սրբեց աչքերը :

— Մի՞թէ ես ինձ համար եմ լաց լինում. — ասաց
նա — ես պատրաստ եմ ապրել խրճիթումը, պատրաստ
եմ վաստակելու օրուան հացս, և ոչ մի ժամանակ անբա-
ւական չեմ լինիլ և չեմ գանգատիլ... Բայց դու, Էդու-
արդ... դու, որին կարելի է յանգիմանել միայն անկա-
կած ազնուութեան համար, մեծահոգութեան համար,
դու պէտք է չարչարուիս... բանտումը... ես չեմ կարող
այդ համբերել... բայց անարդ, անպատիւ Գիլը... զու-
տեղը չէի ատում ես այդ մարդուն... առանց հաշուի...
սիրտս զգում էր :...

Աինը կամաց հեկեկում էր, գլուխը դնելով մար-
դու ծնկան վերայ, որ լուռ էր կացած :

— Էդուարդ, դու կ'զրէիր քո եղբօր Զօնի մօտ, —

ասաց նա մէկ քանի ըոպէից յետոյ :

Նա շարժեց գլուխը :

Գրիբ էդուարդ, — խնդրում էր Հեղինէն, թող հը-
պարտութիւնդ, նախապաշարումդ, նա քո եղբայրն է,
մեծ եղբայրդ է... սառնասիրտ և խիստ է, բայց նա բա-
րեպաշտ . . . ազնիւ է — աւելացրեց նա անհամբերու-
թեամբ — նա շատ հարուստ է, նա չի մերժիլ... Գրիբ
նրան : . . .

— Ես գրեցի, ընդմիջելով պատասխանեց էդուարդը:

— Ի՞նչ պատասխան ստացար :

Էդուարդը լուռ էր կացած :

— Ի՞նչ է ասում ջօնը . պատասխանեց արդէն :

— Պատասխանեց — մերժում է ամենևին. ահամայ ա-
սաց էդուարդ: — Նա ասում է, որ իր ունեցած հարս-
տութիւնը հարկաւոր է իւր սեպհական գործի հա-
մար, յանդիմանում է իմ անզգուշութիւնս, անհաշ-
ուութիւնս. այս է հարազատ եղբայրս :

Ես քեզ ասում եմ, Հեղինէ, որ ոչինչ յոյս չ'կայ:
Հիմակ պէտք է հաւաքենք մեր քաջութիւնը, և հաս-
տատութեամբ համբերենք քամբադատութեանը: Արի
կաց. մի տխրիր: Դու զօրեղ ես ոգով, դու քրիստոնեայ ես:
Քաջալերվիր, մտածիր երեխանցդ համար, դու հար-
կաւոր ես նոցա... ինձ:....

Նա փաթաթվում էր, համբուրում էր նորա ձեռ-
քերը, աշխատում էր հանգստացնել և քաջալերել:

—Վաղն կամ միւս օրն բոլոր այս տան կարասիքը պէտք է ծախուի, ասաց նա,— քո սենեակին և մէջի եղած բաներուն ոչ ոք ձեռք չի տալ, Հեղինէ :

—Միթէ ես քեզանից պէտք է բաժանուեմ. թող բոլորը տանեն : Ինձ ոչինչ հարկաւոր չէ—յուսա հատուածեամբ ասաց կինը :

—Այդ մեծահոգութիւնը անօգուտ է, իմ ընկեր, նա չի փրկիլ ինձ : Օրէնքը պաշտպանում է քո սեպհականութիւնը—բայց մեծ է այս : Դու չունես գոհարներ, դու ոչ մի ժամանակ չէիր ուզում ունենալ, ինչո՞ւ լսեցի ես քեզ... հիմակ նոքա պէտք կ'զային.— Դու ի՞նչ ունես թանգագին:... Երկու թէ երեք ծածկոց չալ... մէկ քիչ արծաթեղէն... պահիր նոցա, Հեղինէ, դու ստիպւած կ'լինես ծախել, որ պահես քեզ և երեխանցդ : . . . Ա՛խ Աստուած, Աստուած իմ : Ինչո՞ւ էի ես այնպէս կուրացել Ի՞նչո՞ւ չէի մտածում, որ այսքան իմ սիրելիների բաղդը ինձնից է կախեալ :

Ձեզ կարելի է յայտնի է, որ Պետերբուրգումը վաղուց արդէն կար մի վաճառատուն Աշտօնը և ընկ. անունով որ մեծ առուտուր ունէր սահմանից դուրս : 1838 թուականին նորա կառավարիչ Պ. Պիատեր Աշտօնը վաղաճանուեցաւ, թողնելով գործերը կարգին : Նորա որբ և այրի կինը 14 տարեկան աղջկայ Ֆաննիի հետ միասին գնաց Անդղիա իր ազգականների մօտ : Մեծ որդին 30 տարեկան Ջոնը, արդէն ամուսնացած, մնաց Պետեր-

բուրդուժը հաշուետունը կառավարելու : Երիտասարդ
 էդուարդը, 22 տարեկան երիտասարդը, ճանապարհոր-
 դութիւն էր անում Եւրոպայի մէջ : Ժենէվայի լճի
 ափերումը այս երիտասարդը ծանօթացաւ մէկ Ռուսաց
 ընտանիքի հետ : Հարուստ և այրի Վասիմովան մէկ
 քանի տարի ապրում էր սահմանից դուրս, իր հիւանդու-
 թեան պատճառաւ : Ռուսները ոչ մէկ տեղ չեն սիրում
 Ռուսաց այնպէս, ինչպէս օտար երկիրներումը, բայց է-
 դուարդ Աշտօնը էր կիսառուս, այսինքն Պետերբուր-
 գումն էր ծնվել և մեծացել, ուսում էր առել ռուսե-
 րէն և բացի սորանից ազնիւ և բարի երիտասարդ էր :
 Վասիմովան, շուտով սիրեց նրան և ընդունում էր
 ինչպէս հարազատ, նոցա ման գալու ժամանակը
 նա միշտ նրանց հետ էր, բարձրանում էր սարերի
 վերայով փոքրիկ Ռոսախալաւի հետ, ձիով ման գալ
 էր սովորցնում Վիգային և ջահել մանկանց դաս-
 տիարակուհի օրիորդ Հեղինէին : Յաճախ երբ որ զօ-
 րապետուհին հիւանդութեան պատճառաւ մնում էր
 տանը, այս ուրախ նորահաս անձինքը գնում էին ձիա-
 ներով մանգալու, կամ թէ նաւակով լճի վերայ այ-
 ցելութիւն էին գնում բոլոր շրջակայ աւերակներին,
 դժուարութեամբ բարձրանում էին ժայռի վերայ, հիա-
 նում էին ջրվէժների վերայ, ուսում էին պանիր և կաթ
 գիւղացոց խրճիթներումը, — այս մօտիկ ծանօթու-
 թեան հետեանքը այն էր, որ պարոն էդուարդը սի-

րահարուեցաւ սիրուն դաստիարակուհու վերայ, նմա-
նապէս էլ սա : Կասիմովան նկատում էր այս, բայց ո-
չինչ չէր ասում : Նա սիրում էր Էդուարդին և Հեղինէին
ու ուրախ էր, որ իւր դաստիարակուհուն կ'պը-
սակի հարուստ Անդղիացու հետ : — Հեղինէից հաւատա-
ցած լինելով Էդուարդը, աշունքին գալով Պետերբուրգ,
յայտնեց իր միտքը եղբօրը : Ամէն ազգականները շատ
ընդդէմ էին այս ցանկացած մտքին : Առհասարակ ըն-
տանիքներումը չեն սիրում այլահաւատի հետ պսակ-
վածներուն, շատ կարելի է ուրիշները այնքան հակա-
ռակ չեն այս բանին, ինչպէս որ Անդղիացիք : Բայց Հե-
ղինէն, բացի սրանից Ռուս էր ծննդեամբ և կրօնով .
աղքատ էր, ընդ նմին և դաստիարակուհի, այսինքն իր
աշխատանքով պէտք է վաստակէր իր հացը : Անդղիա-
կան հպարտութիւնը, անդղիական անհամբերութիւնը,
անդղիական արծաթասիրութիւնը — այս ամէնը հա-
կառակ էին յիշեալ ամուսնութեան : Բայց Էդուա-
րը նոյնպէս էր Անդղիացի և բրիտանական յամառու-
թիւնը նորա մէջ շատ զարգացած էր : Այս յամառու-
թիւնը միացած երիտասարդ մարդու սրտի սիրոյ
հետ, բաւական զօրեղ էր հակառակելու ազգա-
կանների բոլոր առաջադրութեանց : Աշտօն Էդուար-
դը գնաց արտասահման, հանդիպեցաւ Կասիմովի ըն-
տանիքին Հռովմում, պսակուեցաւ Հեղինէի հետ Ռու-
սաց դեսպանական եկեղեցումը և մէկ քանի շաբաթից

Ճանապարհ ընկաւ անգղիական նաւով, որնոր կանգնած էր Չիլիթա—Վեքիի նաւահանգստում:

Այսպէս անքակ կապով հաստատելով իր ամուսնութիւնը գնաց Անգղիա, որ ներկայացնէ իր մատաղահաս կնկան իր մօրը ու քրոջը: Գործը արդէն կատարած էր, ընդդիմախօսութիւնը աւելորդ էր, պէտք էր հնազանդել հանգամանքներին: Եղուարդը սիրելի որդի էր, տիկին Աշտօնը ներեց և ընդունեց իր հարսին եթէ ոչ քնքուշութեամբ, գոնէ քաղցրութեամբ. Ծաննին, որի սիրտը դեռ ևս սառած չէր, Ալբիոնի մէզերի մէջ, սերտութեամբ բարեկամացաւ իր եղբօր քաղցրը և բարի կնոջ հետ: Նոքա այցելութիւն էին դրնում լուսաւորեալ Անգղիայի հետաքրքիր տեղերին և Սկովտիայի գեղեցկագիր սարերին և բերդերին: Հիղինէն խելօք էր, լաւ խօսում էր անգղիէրէն և ոչ մէկ տեղ օտար չէր, և որովհետև արդէն էր բնիկ Անգղիացու կին, ուստի անգղիական հասարակութիւնը ընդունեց նորան առանձին սիրով: Պառաւ տիկին Աշտօնը մինչև անգամ գրեց Պետերբուրգ իր անդրանիկ որդուն, թէև ինքը հաւան չէ այս ամուսնութեան, բայց գործը արդէն վերջացած է և նեղանալը անօգուտ, մանաւանդ որ Հեղինէն բարի կին է և չափաչանց սիրում է Եղուարդին. կարծիւմ նոքա բաղդաւոր կ'լինեն: Մօր հաշտութիւնը բաց արաւ Եղուարի առաջ նորա Պետերբուրգի բոլոր ազգականների դռները: Նրբոր

նա հոկտեմբերին նորից եկաւ Պետերբուրգ, պարոն Զօ-
նը և տիկին Վարիէտ Աշտօնը միւսը օրը ըստ անգ-
ղիական սովորութեան այցելութիւն արին մատաղա-
հաս ամուսիններին. սրանց հետեցին միւսները: — Հե-
ղինէն ՚ի զուր աշխատում էր բարեկամանալ իր մար-
դու ազգականների հետ. նորա ծանօթացան, բայց բա-
րեկամանալ անհնարին եղաւ նրանց: Ի՞նչ կարող էր
լինել հասարակաց աշխոյժ և բարեկիրթ Հեղինէի և
և չոր ու ցամաք տիկին Վարիէտի մէջ: Հպարտ Անգ-
ղիացի կինը ասում էր իր հալսին նորա աղքատու-
թեան համար և մի և նոյն ժամանակ նախանձում էր
նորա գեղեցկութեան, քաղցրութեան և ընկերութեան
մէջ ունեցած վայելուչ վարվողութեան: Չնայելով Վա-
րիէտի մաղձոտ ակնարկութեանց, թէ նա եղել էր դաս-
տիարակուհի, չնայելով նորա երգիծական «Ռուս ա...
տիկին» կոչմանը, որնոր նա տալիս էր նրան իր մօտիկ
ծանօթների մէջ, Հեղինէն մեծ յաջողութիւն էր գրա-
նում վաճառականական ընկերութեան մէջ: Ի՞նչ գործ
կար այդ մարդոց, որ Հեղինէն մարդու էր գնացել ա-
ռանց օժիտի: Նորա զարդը նոյնպէս ճօխ էր, ճաշերը
նոյնպէս համեղ, խնջոյքները նոյնպէս հոյակապ, ինչ-
պէս ուրիշներինը, և մինչև անգամ գեղեցիկ տանտիկ-
նոջ լուսաւորեալ ճաշակին և քաղցրաբարոյութեան
չնորհիւ կրտսեր տիկին Աշտօնի երեկոյները աւելի ու-
րախ էին և խնջոյքները աւելի բազմամարդ, քան ա-

ւաղ տիկին Աշտօնինը : Տիկին Գարիետը միշտ բազմահոգս էր, և վրդոված իր խնջոյքներով. նա պարապեցնում էր հիւրերուն պատմելով իր հոգսերի և տնտեսական անյաջողութիւնների վերայ. երիտասարդները համեմատելով երկուսին ծաղր էին անում Գարիետին : Անգղիացի կինը նկատում էր այս, նեղանում էր, և նորա բարկութիւնը այս բոլոր համեմատութիւնների և ծաղրածութիւնների համար ընկնում էր խեղճ Ռուսազգի տիկնոջ վերայ :

Միայն արտաքուստ երկու ընտանիքների յարաբերութիւնները լաւ էին, նորա յաճախ միասին ծաշում էին, միասին վարձում էին օթեակ թատրոնումը, միասին գնում էին սարը ուրախութիւն անելու : Երբ որ իր ամուսնութիւնից հինգ տարի յետոյ Էդուարդ Աշտօնը գնաց Մոսկուա, ուր հիմնեց իր վաճառականական տունը, երկու եղբայրները, միշտ գրագրութիւն էին անում միմեանց հետ, ծանօթացնում էին իրանց բարեկամներուն միմեանց, և ընդհանրապէս ապրում էին սիրով :— Այս պատճառով երբ մի անակնկալ փոթորիկ ծագեցաւ Էդուարդի գլխին և նա բանտարկուեցաւ, Հեղինէն կատարեալ հաւատարմութեամբ դարձաւ դէպի Զօնը, նկարագրելով իր թշուառութիւնը, նորա սիրալիր սիրտը չէր կարողանում հասկանալ, որ մի եղբայր կարող էր անօգնական թողնել իր եղբօրը այսպիսի հանգամանքումը : Էդուարդի մայրը

երկու տարի առաջ արդէն մեռած էր, բայց Ֆաննին
ցոյց էր տալի կենդանի կարեկցութիւն իր եղբօրը թը-
շուառութեան մէջ. նա խօսոյն ուզում էր տալ իր գու-
մարը, նորա գործքերը կարգի դնելու համար, բայց
մեծ մայրը, որի մօտ նա կենում էր և հօրեղբայրները
չէին թողնում նրան իր գումարը դէն գցել, ինչպէս ի-
րանք ասում էին, և թէպէտ չունէին իրաւունք ար-
գելելու կատարելահասակ աղջկան վարվելու իր գու-
մարի հետ իր կամքի համաձայն, բայց զանազան խո-
րամանկութիւնով ու շացնում էին գումարի տալը: Ֆա-
նին բարկութիւնիցը դողում էր:

Մեղք է քեզ չօգնել էդուարին, զրեց Ֆաննին
Ջօն Աշտօնին, դու այդպէս հարուստ ես և կարող ես
ստունասրտութեամբ նայել նորա խայտառակութեան
և չաղչարանքին, երկնչիր Աստուածանից, յիշէր, որ
սուրբ գրքումը գրած է. «ով տեսնում էր իր եղբօրը կա-
րօտութեան մէջ և փակում է իր սիրտը նորա հա-
մար. ո՞ւր է այնպիսինի մէջ Աստուծոյ սէրը»: Օգնիր
էդուարդին, ես կ'վճարեմ նորա բոլոր պարտքը իմ գու-
մարից: Խղճացէք խեղճ Հեղինէին և նորա զաւակներին.
յիշեցէք, որ դուք էլ ունէք զաւակներ: Նրբ ես ձեռք
կ'գցեմ իմ գումարը, կ'գամ Ռուսաստան, բայց մինչև
այն ժամանակ գոնէ էդուարդի որդոցը վեր առ քեզ
մօտ, և տո՛ւր նրանց լաւ կրթութիւն, որ ապահովես
նոցա ապագան, ես կ'հատուցանեմ նոցա դասերի փողը:

“Սիրելի քուրիկ, գրում էր Ֆաննին Հեղինէին, — Աստուած տեսնում է, որ ես մասնակից եմ ձեր ներգութեանը և Էդուարդի քամբախտութեանը, բարեարէք նորան իմ կողմից, և ասացէք, որ բոլորը, ինչ որ ունեմ ես, նորանն է. ես կ'կամենայի շուտով ներգործել, բայց գիտեա որ փողի հաշիւը միշտ ծանր է լինում և արգելքներով: Քիչ էլ համբերեցէք, երբ ես կ'ստանամ իմ գումարը, իսկոյն կ'վերադառնամ Ռուսաստան. ասացէք Էդուարդին, որ նա իմ գումարները կարող է գործ դնել ինչպէս կ'կամենայ: Իսկ մեր եղբայր Զօնը ցանկանում էր յանձն առնուլ ձեր քաղցր երեխանց հոգացողութիւնը. — երբ ես կ'գամ ինքս կ'սովորցնեմ նրանց, այն ժամանակ մենք երկուսս միասին կ'պարապենք նոցա կրթութեամբ. մինչև այն ժամանակ խորհուրդ եմ տալի ձեզ, խնդրում եմ ձեզ, ամրացրէք ձեր սիրտը, յանձն առէք բաժանվել նորանցից հէսց նոցա օգտի համար: Դուք այնքան անհանդիստ էք, որ չէք կարող կարգին պարապել նոցա հետ, բայց նոցա հասակում պէտք է խնայել ժամանակը: Յոյս դրէք Աստուծոյ վերայ, փորձութիւնը երկարատե չի լինիլ”:

Այս առաջին մտխոյեղութեան և կարեկցութեան խօսքն էր, որնոր Հեղինէն ստացաւ իր մարդու ազգականներից. այս նամակի հետ և մի ուրիշ նամակ կար Զօն Աշտօնից:

“Մեր քոյր Ֆաննին” գրում էր նա — “յայտնում է

ձեզ մեր ցանկութիւնը վերառնելու ձեր սիրելի աղջկերանց կրթութեան համար, խնդրում եմ ձեզ նրանց բերել անշուշտ ինձ մօտ և հաւաստի եղէք, որ դուք կ'թողնէք նրանց բարի և հոգացող անձի ձեռքը: Ես յոյս ունեմ, որ սիրելի երեխերքը գոհ կ'լինեն մեզանից. բայց դուք ազատ կ'լինիք գտնելու ձեզ համար մի որեւիցէ պարապմունք կամ ապահովութիւն:

Անձնանուէր Ձեր հղբայր Զօն Ա.

Նամակի մէջ դրած էր փողը մինչև Պետերբուրգ գնալու:

Եւ ահա այս էր Հեղինէի համոզողական խնդրքի վաղուց սպասած պատասխանը, ահա բոլոր օգնութիւնը, որնոր առաջարկում էր նորան իրա տեղը: Էդուարդի վերայ ոչ մէկ խօսք չ'կար: Նորան բարեւ չ'կար: Խեղճ Հեղինէ: Միայն Աստուած տեսնում էր նորա սրտի կրակը, միայն նա էր պահպանում նրան այն զարհուրելի բոպէներումը: Նա դողաց և գցեց նամակը սեղանի վերայ. յետոյ վերառաւ նորից կարդալ էլի. նա ուզում էր տեսնել, չի՞ լինիլ արդեօք հեռացնել այս աւրստիւնի օգնութիւնը, չ'կայ արդեօք աւելի լաւ յոյս, կամ թէ չի՞ հրաւիրում արդեօք Զօնը իրան էլ: ... Նա դարձնում է միւս երեսը և տեսնում է յետագիր, որնոր առաջ չ'նկատեց. Զօնը յայտնում է, որ Արխանգելսկում մը պահանջում են դաստիարակուհի, և թէ նա երեխանց հոգացողութիւնից ազատուելով, կարելի է հա-

մաճայնի այդ պաշտօնը յանձն տռնելու, այն ժա-
մանակ ինքը ուրախութեամբ կ'ներկայացնէր նորան և
այլն :

Գնա՛լ այսպէս հեռու թողնել մարդուն բան-
տի մէջ թողնել երեխերանց ուրիշի ձեռքին, մա-
նաւանդ այն մարդու ձեռքին, որնոր այնպէս անդուծ-
է, որ անու՛մ է իրան այսպիսի առաջարկութիւն : Այս
նազելի երեխերանց, այս քնքոյշ, այսպէս սիրով մե-
ծացրածներուն յանձնել նորան — ո՛չ, լաւ է մեռանել :
Ֆաննին ցանկանում էր այս — այո, թէ որ Ֆաննին ե-
ղել էր այս տեղ, այն ժամանակ ուրիշ բան էր. բայց
Ֆաննին այստեղ չէ, և Աստուած գիտէ, երբ կ'դայնա :
« Զէ, ես ոչ մի ժամանակ ոչնչով չեմ բաժանվել և-
րեխանցիցս », — ասաց Հեղինէն. նա նստած էր աւստու-
հանի մօտ շատ տխուր . արեգակը դեռ փայլում էր
պայծառ, բայց արդէն թանձր սպիտակ ամպերը մեծ
խումբերով շարժում էին կապոյտ երկնքի վերայ : Յզոս-
տոս ամիսը արդէն վերջանում էր : — Նա անցկացրեց ա-
մառը աղքատիկ խրճիթումը :

Խեղճ նորա երեխերէքը, Մերին 10 և Նունէ 6 տա-
րեկան, չէին նկատում, որ նոքա Սօկօնիկի հարուստ
ամարանոցում չեն, նոքա էլի այնպէս ուրախ վազվը-
ղում էին փոքր անտառումը, նոյնպէս ախորժակով ու-
տում էին կաթը սև հացով և անտառի ելակը, նո-
ցա մայրը էլի նոյնպէս քնքոյշ զուրգուրում էր, ինչպէս

էլ ճոխ պատշգամի վերայ, հոտաւէտ ծաղկներով զարդարած. նոքա մօռացան էլ, որ այս ամառը չեն տեսել ոչ նարինջներ, և ոչ դեղձեր: Այս բաղդաւոր տարիքներումը զրկումն նկատելի չէ. երեխերանց հարկաւոր է սէր և յարգանք. ճոխութեան և վայելչականութեան վերայ նոքա չեն հոգս անում: Երբ հարցնում էին «թէ որտեղ է իրանց հայրը», շեղինէն առ հասարակ պատասխանում էր. գործերի համար գնաց:— Ինչո՞ւ ես դու տխուր, մայրիկ: Նեղանում եմ առանց ձեր հօրը. — և երեխերքը ուրիշ ոչինչ չէին հարցնում:

Բայց ահա դալիս է աշունքը. նրանից յետոյ կ'գայ ձմեռը, պէտք է գնալ քաղաք, տուն վարձել փայտ դրնել... բայց քսակը դատարկ է, բոլոր տանու բաներից կէսը արդէն ծախած է չնչին գնով... ոչ մէկ տեղից յոյս չ'կայ:.... Ի՛նչ կ'լինի, թէ որ խեղճ երեխերքը կը դողան ցրտից: ... Եթէ կ'պակսի նոցա կերակուրը... Կ'տանի՞ արդեօք շեղինէն այս բոլորին: Ինքնասիրութիւն չէ՞ արդեօք զրկել սոցա առաջարկած ապաստանարանից միայն նորա համար, որ աչքի առաջը տւնենայ նրանց: Ինքնասիրութիւն, այն էլ մայրական սիրոյ մէջ:

Ոչ, այս անկարելի է: Մայրը բոլոր նեղութիւնները կ'տանի, նա կ'մեռնի իրա որդոց բաղդաւորութեան և հանգստութեան համար. 'ի հարկէ կ'մեռնի. այս բաժանումն բոլորը մին է թէ մահ:

Բայց կարելի է նազելի երեխերանց սէրը, կարելի է
Հեղինէի արտասուները շարժեն Զօնի քարացած սիր-
տը... Հեռուից հեշտ է մերժել. բայց կարելի^օ է տես-
նել արդեօք լաց լինող կնկան, որբացեալ երեխերանց
և լինել սառնասիրտ : Այո՛, ահա այս է յուսոյ ճա-
ռագայթը, պէտք է դնալ առանց յետաձգութեան.
գուցէ Էդուարդի բանտարկութիւնը երկար չը քաշի.
գուցէ ինքը կ'դառնայ նորա մօտ իբրև մխիթարու-
թեան համբաւաբեր :

Հեղինէն դնաց Էդուարդի մօտ բանտը, տարաւ հե-
տը Զօնի և Ֆաննիի նամակները, յայտնեց իր բոլոր
նեղութիւնները և յոյսերը. նա կարդաց նամակնե-
րը. լսում էր Հեղինէին տխրադին և անտարբերութեամբ,
յետոյ համբուրեց նորա կռացրած գլուխը և ասաց մի-
այն .

3425
40 — Արա՛, ինչ ուզում ես :

Հեղինէն յետ դարձաւ անքաջալեր, անմխիթար :
Երկար ժամանակ չէր իմանում նա, թէ ինչ անի : Ն-
րեկոյեան Մերին մօտ եկաւ նորան և քաղցրութեամբ
հարցրեց :

— Ի՞նչու ես դու այդպէս տխուր, մայրիկ, երևի
հայրս հիւանդ է :

— Առողջ է, պատահականօք Հեղինէն լաց լինելով :

— Բայց ինչո՞ւ ես դու այդպէս լաց լինում :

— Մերի՛ մենք շուտով կերթանք դեռ երբուրդ հօր

եղբօր Զօնի և հարս Հարիէտի մօտ, դու միտդ ունենա նոցա :

Յիշումեմ, ասաց Մերին. միտս ունեմ և հօր եղբօրս որդուն Ալֆրեդին. նա մեծ փայտէ ձի ունի. նա ինձ ման ածում էր էնդուրով և վեր գցեց. ես շատ լաց էի լինում. բայց հօրեղբայրս Զօն, ընծայեց ինձ յախճապակեայ աքաղաղ, որ ինձ մխիթարէ :

— Մենք կերթանք Պետերբուրգ. ո՛հ ինչպէս ուրախ եմ ես. ասաց Նունէն. — մայրիկ. դա այն հարսն է, որի պատկերը հայրս ունի իւր սենեակումը :

— Նա ինքն է. նորա անունն է Հարիէտ :

— Ո՛հ, ինչպէս ուրախ եմ : Մենք նորանց մօտ կերթանք : Դու ճանաչում ես նոցա, Մերի'. բաղդաւոր ես : Դու եղել ես Պետերբուրգ, բայց ես միշտ կացել եմ միայն Մոսկվայումը, և սորանից սավայի ոչինչ չեմ տեսել : Բայց հիմակ ես էլ կերթամ ճանապարհորդութիւն անելու, Պետերբուրգումը կ'ընեմ, էլի ո՞րտեղ, մայր, հը :

Տօրժկում, Տվէրում, Վալդայում, և Նովգորոդում, պատասխանեց Հեղինէն, արտասուական ժպիտով :

— Տվէրում, Վալդայ Նովգորոդ, կրկնեց Նունէն թռչոտելով : Դու եղև ես այնտեղ, Մերի' :

— Միտս չէ, ես այն ժամանակ փոքր էի, պատասխանեց Մերին զարմացած նայելով մօրը, որնոր չէր կարողանում պահել իւր արտասուները. այս սաստիկ ցաւը ակրեցրուց հասկացող երեխին :

Այն երեկոյին, որ միւս օրը պէտք է գնացել էին, Հեղինէն վաղ քնեցրեց Նունէին :

— Մայրիկ, թողէք ինձ նստել ձեզ մօտ, խնդրեց Մերին, — ես հանդարտ կ'նստեմ և չեմ նեղացնիլ ձեզ :

— Բարի է, ասաց Հեղինէն : Նա նայեցաւ շուարած իր աղջկան և զարմանալով կարդում էր նորա երեսի վերայ համակրութիւն. այնպէս էր երևում, որ երեսան գուշակում էր իւր մօրից բաժանուելը . Հեղինէն գրկեց նորան և երկուսն էլ նստան բաց պատուհանի մօտ :

Գիշերը շատ մութն էր. երկինքը լուսաւորած էր աստղերով. օդը զով էր, բայց ոչ ցուրտ. մէկ քանի տեղարդէն ընկնում էին ծառից դեղին տերեւներ : Հեղինէի սիրտը պատառւում էր. նա շատ ժամանակ լուռ էր. մինչև անգամ Մերիի սրտին տիրել էր մի անճառելի տրտմութիւն, այնպէս որ չէր համարձակւում մին խօսք անգամ ասելու : Վերջապէս Հեղինէն գրկեց իւր աղջկան և ասաց ցածր, բայց ազդու ձայնով :

— Լսիր ինձ ուշադրութեամբ և աշխատիր միտք պահելու իմ խօսքերս : Էքուց ես կ'տանեմ քեզ և Նունէին ձեր հօրեղբօր մօտ : Դուք այնտեղ կ'մնաք. ես չեմ կարող ձեզ հետ լինել — դուք մենակ կ'մնաք : Բայց ես յոյս ունեմ, Մերի, որ դուք ձեզ այնպէս լաւ կ'պահէք, ինչպէս տանը ինձ մօտ, խնդրում եմ այս քեզնից, իմ հրեշտակ, յիշիր, որ ձեր բոլոր բաղդաւորութիւնը ձեր վարքիցն է կախած, ամէն բանու-

մը հնազանդ եղէք ձեր հօրեղբօրը և հարսին, քաղցր
եղէք նոցա և նոցա զաւակների հետ, բայց զխաւո-
րը այն է, որ չը մոռանաք առաւօտ և իրիկուն աղօթք
անել Աստուծուն :

Յետոյ վեր բերեց նա Աստուածածնայ պատկերը
և օրհնեց Մերիին, որնոր բոլոր մարմնով դողում էր :

Յանձնում եմ ձեզ Աստուծուն և նորա սուրբ Մօ-
րը շարունակում էր Հեղինէն : Թո՛ղ անբաժան լինի ձեզ-
նից իմ օրհնութիւնը : Մերի՛, պահիր այս պատկերը
և երբէք չը մոռանաս աղօթք անելու : Աղօթի՛ր Աս-
ածուն, կրկնում էր Հեղինէն, իր տխուր հայեցուածքը
գցելով իր դեղնած և լացող աղջկայ վերայ. Աստուած
է քո ճշմարիտ և ընտիր հովանաւորը, դէպի նա դար-
ձիր միշտ թէ ուրախութեանդ և թէ տրտմութեանդ
ժամանակ. ես հեռու կ'լինեմ ձեզնից, բայց նա միշտ
մօտիկ է : Նա ասել է. եթէ մայրը կ'թողնի իր զաւա-
կին, ես չեմ թողնիլ նրան : Ո՛հ իմ փոքրիկ, խեղճ և
քնքոյշ Նունէ : Ով Մերի, Մերի, պահպանիր նորան
Հեղինէն չ'վերջացրեց իր խօսքը. տրտմութիւնը յաղ-
թեց նորան. նա վեր ընկաւ անզգայ :

184... . Թուականի սեպտեմբերի առաջին օրերուն,
սուրհանդակի կառքը կանգնեցաւ մի քարաշէն տան
դրան, Վասիլէվսկի կղզու վերայ, պարոն Զօն Աշտօնը
ինքը դուրս եկաւ դրան մօտ և ձեռք ձգեց Հեղինէին

որ դուրս բերի կառքից. յետոյ հանեց երեխանց և ա-
սաց. խնդրեմ ներս մտէք, տիկին Հեղինէ, մի անհան-
գստացէք. ես ինքս կ'հոգամ ճանապարհի արկղի հա-
մար և կ'վճարեմ կառատանին: Հեղինէն մտաւ նախա-
սենեակը, հանեց իր երեխանց տաք շորերը և մտաւ ի-
րան ծանօթ սենեակները:

Ինչպէս տեսանք Հարիէտ Աշտօնը շատ սառը և
խիստ կնիկ էր—բացի սորանից նա չէր սիրում Հեղի-
նէին իրան ծանօթութեան առաջին օրից: Հիմա նա
յիշեց թէ Հեղինէի շքեղ զարդերը, որոնք զերազանցում
էին նորա ծանր և անձաշակ զարդերից և թէ նորա
յաջողութիւնը ու գեղեցկութիւնը: Յայտնի բան է
Հարիէտը այնքան չար չէր, որ ուրախանար իր հարսի
քամբադդութեան վերայ. բայց նորա ինքնասիրտ թեանը
բաւական հաճոյական էր տեսնել, որ այն կնիկը, որնոր
երբեմն խաւարեցնում էր նորա փառքը, այժմ ստիպ-
ված է խոնարհութեամբ որոնելու նորա հովանաւորու-
թիւնը: Այս զգացմունքի ազդեցութեան ներքոյ վեր
կացաւ բազմոցից, երբ հարսը մտաւ հիւրասենեակը,
բայց Հեղինէի տխուր դէմքի վերայ արտավայլում էր
այնքան խնդիրք և տրամուլթիւն, որ գոռոզ Անդղիա-
ցուհին չկարողացաւ համբերել, շուտ առաջ գնաց նը-
րան և պինդ սեղմեց նորա ձեռքը: Այս միջոցին պ.
Ջօնն էլ ներս մտաւ շատ ուրախ. բարձրացրեց իր եղ-
բօր երեխանց, համբուրեց նրանց, և թողեց յատակի

վերայ ու քաղցրութեամբ բարեկեց իր հարսին :

— Ե՞րբ էք վերադառնում Մոսկվայ, հարցրեց պարոն Զօնը Հեղինէից, երբ երեխերքը նախաճաշիկից յետոյ դնացին խաղալու :

Չ'գիտեմ... ես դեռ դուրս վերայ չեմ մտածել :

— Ո՛հ ինչպէս դուք նախապես չէք, դուք այստեղ իսկ պէտք է կառքերի գրասենեակումը գրուիք վերադարձի համար : Երբեմն պատահում է, որ երկու շաբաթ, մինչև անգամ մէկ ամիս առաջ տեղերը բռնած են լինում :

Հեղինէն իրան մէջ ցանկանում էր, որ այս այսպէս պատահէր :

— Բայց և այնպէս մի նեղանար, ես ինքս կ'հոգամ, պարտաւորելով ասաց պարոն Զօնը :

— Դուք չէք դալ արդեօք Մոսկվա, ասաց երկչոտութեամբ Հեղինէն :

— Ինչո՞ւ համար :

— Չէք այցելու թիւն անիլ արդեօք խեղճ Եղուարդին : Ես կ'արժուեմ, թէ որ դուք տեսնէիք նորան, ամէն բանը յաջողութեամբ կ'աւարտէիք, դուք կ'զբոսնէիք միջոց : . . .

— Դուք դատում էք, ինչպէս կին, արիկին Աշտօն, դուք ոչինչ չէք հասկանում վաճառականութեան գործերումը : Ես ամենայն օր պէտք է վաճառատանը լինեմ. թէ չէ, գործերս անկարգ կ'երթան. ես ինչպէ՞ս կարող եմ հեռանալ : Եւ ինչո՞ւ : Որ տեսնեմ եղբորս

բանտի մէջ : Այդ շատ զուարճալի՛ է : Դուք գիտէ՞ք թէ
ինչ ամօթ է այդ մեր անուան համար : ... Ես շատ, շատ
բարկացած եմ Էդուարդի վերայ :

— Նորա վերայ պէտք է խղճալ, պարո՛ն Զօն : Դուք
գիտէք, որ նա մեղաւոր չէ իր քամբադուութեամբ.
Գիլէի սնանկութիւնը ձգեց նորան կորուստի մէջ :

— Համարձակվում եմ երկրորդ անգամ կրկնելու, տի-
կին Հեղինէ, որ դուք ոչինչ չէք հասկանում վաճա-
ռականութեան մէջ : Դուք ներեցէ՛ք ինձ, ես այս ա-
սում եմ չէ թէ ձեզ յանդիմանելու, դուք չէք կարող
հասկանալ այդ : Ես կարծեմ, որ մինչև ձեր մարդու
գնալը դուք կարծում էիք, որ բոլոր վաճառականու-
թիւնը այն է, որ գնէք ժապաւէններ և մանուածներ,
ասաց Զօնը, բաւականութեամբ ժպտելով իւր երգի-
ծաբանութեան վերայ : — Բայց Էդուարդը կրթուած
էր հարուստ վաճառատանը . նա պէտք է հասկանար.
Բայց նա միշտ ուզում է իւր խելքով ապրել : Ինչպէ՞ս
չէ նա մեղաւոր : Մարդս երբ որ իւր գործերը վատ է
տանգում, միշտ ինքն է պատճառը : Նա ինչո՞ւ էր երաշ-
խաւոր լինում Գիլի համար :

Բայց Գիլը շատ հարուստ էր և ոչ ոք չէր կարծիլ..

— Վաճառականը չ'պէտք է կարծի. այլ նա հաս-
տատ պէտք է գիտենայ. նկատեցէ՛ք այս բանը տիկին
Հեղինէ : — Նա ինչո՞ւ խորհուրդ չ'արաւ ինձ հետ : Ես
գիտէի՛, թէ նա ինչպիսի մարդ է : Ինչո՞ւ նա չէր հե-

տեղում նորա գործերին:.... Էդուարդը երևելի պարոն է: Նա չէ կարող մանր բաների ետեւից ընկնել: Նա այս պատճառով էլ հիմակ նա բանտումն է:

Դառն խօսքերը շարժվում էին շեղինէի շրթունքների վերայ. նա ցնցողական կերպիւ սեղմում էր իւր ձեռքերը և քաջալերում էր իրան վախենալով. որ չուրարկացնէ այն մարդուն. որից շատ բան էր կախուած: — Քիչ ժամանակ լուռ կենալով, յետոյ ասաց նա.

— Գործը արդէն վերջացած է, հիմակ մնում է միայն օգնել խեղճ Էդուարդին. թէ որ դուք միայն թափել էիք նորան բանտից:....

— Միայն, դուք անուանում էք այս գործը միայն.... Բայց ասենք թէ այդ այդպէս. յետոյ ի՞նչ:

— Էդուարդը շնորհակալութեամբ կ'հատուցանէր ձեզ այդ փողերը:

— Ո՞ր տեղից, համարձակվում եմ հարցնել:

— Նա իւր գործերը միշտ կատարել է ազնուութեամբ և արդարութեամբ. այս ամէնքը ղիտեն. նա ընկաւ քամբաղտութեան մէջ. բայց հաւատարմութիւնը չէ կորցրել. նա կ'ուղղվի:...

— Վա՛տ յոյս է: Չ'իմացաւ պահապանել այն, ինչ որ դժուար է նորից վաստակել: Նա ինքս ունեմ երեխերք. ես պէտք է ժողովեմ նոցա համար. ես չեմ ուզում երեխերանցս թողնել մութրացկան, ինչպէս Էդուարդը:

Հեղինէն յանկարծ բորբոքվեցաւ այս խօսքերից, բայց դեռ չէր կորցրել յոյսը նորա վերա ազդելու, ուստի և լուռ կացաւ: Զօնը շարունակեց:

— Ինչպէս կ'ուղղվի նա: Ի՞նչ հանգամանքով: Ի՞նչ է ձեր կարծիքը:

— Ես չեմ իմանում. ասաց Հեղինէն. կուլ տալով արատասուքները ու յետոյ աւելացրեց: Արեւի է դուք մէկ խորհուրդ տաք նորան:

— Ե՞ս: Ոչ:— Պարոն Եղուարդը ոչ մի ժամանակ չէր լսում իմ խորհուրդները: Շատ բան չէր պատահիլ նորան, թէ որ նա ինձ լսել էր. բայց իրա երիտասարդութեան ժամանակն էլ նա այդպէս կամակոր էր և իր խելքով էր իւր գործերը կատարում, ինչպէս ձեզ յայտնի է:

— Դուք ակնարկում էք մեր ամուսնութեան վերայ. ասաց Հեղինէն կարմրելով. — այդ կողմից դուք ղորդ էք. 'ի հարկէ, թէ որ ես հարուստ էի եղել, Եղուարդը հիմակ սյսքան չէր տանջուիլ:... Մեր քամբաղութիւնից յետոյ, ես քանիցս անգամ նախատում էի ինձ, որ ես տեղի տուի Եղուարդի համոզմունքին, զիջայ իմ սեպհական սիրոյ ազդեցութեանը:...

Հեղինէն սկսաւ լաց լինել:

— Դուք չ'պէտք է նախատէք ձեզ, նաղելի տիկին Հեղինէ, ասաց Զօնը, ցաւելով որ նեղացրեց նորան. — դուք ոչ մէկ բանումը մեղաւոր չէք. ձեր տեղը ուրիշ

աղջիկներն էլ այդպէս կանէին : Մեղաւորը միայն է-
դուարդն է. նա սէտք է վաղուց միտք էր արել, լսել էր
ազգականներին. բայց նա միշտ իւր խելքով էր վար-
վում. նշանակում է, հիմակ էլ ինքը կ'հոգայ իրա հա-
մար :

Հեղինէն լաց էր լինում, Զօնը սեղմեց նորա ձեռքը:
— Հանգստացէ՛ք, տիկին Հեղինէ. ես շատ եմ խըղ-
ճում ձեզ. հաւատացէ՛ք որ շատ եմ խղճում, դուք ոչ
մի բանումը մեղաւոր չէք, ձեր որդիքն էլ նմանապէս.
Ես կ'սիրեմ նրանց. նոցա մասին հանգարտ կացէ՛ք: Ե-
թէ ես կարող եմ ձեզ էլ, միայն ձեզ օգնել մէկ բա-
նով, ես պատրաստ եմ անելու ամենայն բան, ինչ որ
ձեռքիցս դուրս կ'գայ: Այլ հիմակ, երբոր ձեր որդի-
քը ինձ մօտ են, դուք ազատ էք և կարող էք յանձն
առնել այն պաշտօնը : Ես գրեցի ձեզ, որ Արխանգել-
սկում պահանջում են դաստիարակուհի. լաւ ռոճիկ
են տալի. 600 մանէթ, շատ կարելի է 700 էլ : Կ'ուզէք,
եւ ձեզ կ'ներկայացնեմ :

— Ներեցէ՛ք, պարոն Զօն, ի՞նչպէս կարելի է այդ : Ես
կարող եմ արդեօք թողնել ամուսնոյս այսպէս նեղու-
թեան մէջ, և գնալ մէնակ այդպէս հեռու ամենայն
ազգականներից :

— Բայց ես կարծեմ, որ աւելի դուրաւի է գնալ այդ-
պէս հեռու, որտեղ որ ձեզ չեն ճանաչում, երեւի դուք
ամաչում էք ապրել աղքատութեան մէջ այնտեղ, ուր
ձեզ ճանաչում էին հարստութեան ժամանակ :

— Ես չեմ ամաչում իմ աղքատութեամբ: Ես ուրախ եմ վաստակելու օրուան հացս, միայն որ տեսնեմ Եդուարդին, միայն որ թեթեացնեմ մէկ բանով նորա տանջանքները:

— Դուք շատ բարի էք:

Բայց ի՞նչ պէտք է անէք դուք:

— Մոկվայում տեղ կ'մնտրեմ. երաժշտութեան դասեր կ'տամ:

— Էտուրով շատ չէք վաստակիլ: Ուրեմն չէք ուզում Արխանգէլսկ...:

— Այ, շնորհակալ եմ ձեզնից: Ես կ'դառնամ Մոսկվա:

— Բայց ես խորհուրդ կ'տայի Արխանգէլսկ երթալ: Այդ աւելի օգտաւէտ է: Բայց ինչպէս կ'ուզէք:

Նա սեղմեց նորա ձեռքը և դուրս գնաց: Նրան ծանր և խղճալի էին թվում նորա արտասուքները և նեղութիւնը. կ'ուզէր հանգստացնել նորան, օգնել նորան — բայց չ'զոհել դորա համար իւր ունեցած հարստութիւնը: Եւս առաւել որ երեխայ ժամանակուանից նա չէր սիրում Եդուարդին, հօր և մօր սիրեկանին, և հիմակ ծածուկ ուրախանում էր նորա քամբաղտութեան վերայ:

Միւս օր պ. Զօնը եկաւ շատ ուրախ նախաճաշիկ ուտելու, և դառնալով դէպի հարսը. — Ահա ես բռնորը կարգի բերի, ասաց:

Հեղինէն նայեցաւ նորա վերայ հարցական կերպով:

— Ես ինքս գնացի կառքերի գրասենեակը. հարցնում եմ տեղ Մոսկվա վերադառնալու. ինձ ասում են թէ երեք շաբաթ առաջ բոլոր տեղերը վեր են առել: Տեսնում է՛ք — ես ձեզ ասացի: — Ես արդէն դուրս էի գալի, որ պատահեց ինձ մէկ կիսածանօթ մարդ: Մենք բարովեցինք միմեանց: Ես ասում եմ նորան, ի դուր էք շտապում, ոչ մէկ տեղ չ'կայ. երեք շաբաթ առաջ արդէն վեր են առած: Նա պատասխանում է ինձ, որ ուզում էր գնալ էքուց Մոսկվա, բայց խանդարեց մի անակնկալ հանգամանք և նա կը ցանկար ուրիշին տալ իրա տոմսակը: Մենք այստեղ վերջացրինք բանը: Ես գրեցի ձեր անունը: Փողերը տուած են և դուք էքուց էլ կարող էք գնալ: Ահա այսպէս է լինում, երբ մարդ ինքն իրան բանն է շինում:

Նա կարծում էր որ շատ ուրախացրեց նորան: Հեղինէն շնորհակալութիւն պէտք է արել էր նորան ծառայութեան համար: Իսկոյն ճաշեց յետոյ նա գնաց վերեւ, որ վերջին գիշերը անցկացնի իւր երեխանց հետ առանձին, յետոյ քնեցնելով իւր փոքրիկ Նունէին և հարիւր անգամ օրհնելով իւր սիրելի Մերիին ու խրատելով — մնաց, մինչև նոքա քնեցան և ինքը արտասուալից աչքերով իջաւ հիւրասենեակը: Արտասուները դեռ աչքերումն էին և ձայնը դողդոջուն. նա հազիւ կարողացաւ խօսել:

— Դուք յաճախ կ'գրէք ինձ նամակ, — ասաց նա, գոնեա շաբաթը մի անգամ — այնպէս չէ՞:

— Անպատճառ — թէ որ կարող եմ, բայց երբեմն կարելի է ոչինչ չը լինի գրելու, այն ժամանակ դուք չը նեղանաք — ասաց Հառիէթը :

— Ո՛հ, քուրիկ, ասաց Հեղինէն, առաջին անգամ իւր կեանքում անուանելով հարսին այսպէս — բոլոր իմ կեանքս այս երեխերքն են. ես պատրաստ եմ սոցա համար — այս բաժանումն նոյնպէս դժուար է, ինչպէս մահը. բայց ես զոհ եմ անում... նոցա բաղտաւորութեան համար... գոնէ ես այսպէս եմ կարծում:...

Նա նեղութեամբ դարձրեց աչքերը Հառիէթի վերայ. — ես վճռեցի այս միայն նոցա համար... բայց եթէ ես համբաւ չեմ ունենալ նոցանից — գոնէ շաբաթը մի անգամ... ես չեմ համբերիլ այդ, մենք դեռ ոչ մի ժամանակ չենք բաժանուել: — Մտածեցէք իմ դրութեանս վերայ. ես մէկուկ կ'ըլնեմ... ամուսինս բանտի մէջ... երեխերքս ինձանից հեռու... դուք ինքներդ կ'ինէք և մայր — 'իսէր Աստուծոյ, գրեցէք, խոստացէք ինձ այդ... Յիրաւի տիկին Հեղինէ, դուք շատ այլայլած էք :

Խոստանալ — նշանաւոր գործ է. կարելի է հարկաւոր բան պատահի, որ չ'կարողանամ գրել կամ թէ հիւրերը խանդարեն — ես կարող եմ հիւանդանալ:...

— Ո՛չ, ո՛չ Հառիէտ, ընդմիջեց մարդը, շարժած խեղճ մօր դրութեամբ. միշտ կարելի է դտնել ժամանակ մէկ քանի խօսք գրելու:

— Ամենայն երեք շաբթի և շաբաթ, որ սուրհան

դակի օրեր են ժամանակ չունեմ գրելու, բայց կիրակի օրերը ես ազատ եմ. կարող եմ գրել, և երկու շաբթի ուղարկել սուրհանդակ, հինգշաբթի դուք կ'ստանաք, և այսպէս ամենայն հինգշաբթի դուք նամակ կ'ստանաք. թէ որ կինս չի կարողանայ, ես կ'գրեմ:

— Աստուած ձեզ վարձատրէ. ասաց Հեղինէն: Գրեցէք, թոյլ տուէք նոցա էլ. թոյլ տուէք Մերիին գրել ինձ ամէնը, բոլոր իւր փոքր ուրախութիւնները և նեղութիւնները: Ես ձանձրացնում եմ ձեզ, բայց ցաւեցէք իմ նեղութեանս վերայ: Դուք ինքներդ ունիք երեխերք, արեք ինձ համար այն, ինչ որ ես ուրախութեամբ կանէի ձեզ այսպիսի հանդամանքում: Եղէք նոցա հետ ներողամիտ, նոքա դեռ ևս ջահիլ են, եթէ նոքա իրանց երեխութեամբ կ'մեղանչեն ձեր դէմ, ներեցէք նոցա տարիներուն, յիշեցէք նոցա որք լինելը: Դուք վեր առաք ձեր վերայ սուրբ պարտաւորութիւնը—կատարեցէք սրբութեամբ—միտը բերէք, որ միանգամ դուք կերթար Աստուծոյ դատաստանի առաջը—Աստուած ձեզ կ'հատուցանէ փոխարէնը... Կրկնում եմ, դուք վեր առիք ձեր վերայ սուրբ պարտաւորութիւն—եթէ դուք կ'կատարէք ինչպէս եղբայր, ինչպէս քրիստոնեայ—Աստուծոյ օրհնութիւնը միշտ անպակաս կ'լինի ձեր և ձեր որդոց վերայ: . . . Այս խեղճ երեխերանց ամենայն ուրախութեան համար Աստուած կ'հատուցանէ ձեզ տարիներով բազդաւորութիւն և

ուրախութիւն :... Բայց — եթէ դուք կ'ըրկէք նոցա... :

Նա վեր կացաւ և դադարեց իւր մեծ և տխուր աչքերը Զօնի վերայ, որնոր բարկութեամբ և մի և նոյն ժամանակ ցաւելով նայում էր այս թոյլ կնկան անականուներէ հաստատամտութեան վերայ : Տիկին Հառիէթը սեղմում էր ուսերը և կրկնում էր կիսաձայն :

— Նա շատ այլայլած է...

— Ես չեմ իմանում, ինչո՞ւ էք տաքանում դուք, քուրիկ, ասաց սառնութեամբ Զօն Աշտօնը. — ինչո՞ւ էք դուք բոլոր օրհնութիւնները առաջ տալիս և յետոյ սպառնում էք ինձ Աստուծոյ դատաստանով նորա համար, որ ես ձեզ անում եմ ծառայութիւն :

Պաննին խնդրեց ինձ վեր առնել ձեր որդոց, և ես ուրախութեամբ համաձայնեցայ, զիտենալով, որ նոքա ձեզ ծանրութիւն են...

— Ծանրութիւն : Նրեխերքը ինձ ծանրութիւն են տալի : Մի՞թէ ծաղիկները ծանրութիւն են տալի երկրին... դոչեց բորբոքմամբ Հեղինէն :

Հառիէթը նորից սեղմեց ուսերը և խոժոռութեամբ նայեցաւ իւր ամուսնոյն : Նա շարունակեց հանդարտութեամբ .

— Հապա մի' նեղանաք, ես այդպէս չէի ուզում ասել. ես այդ չէի մտածում. բայց դուք այնպէս տաքանում էք, և չէք թողնում մի խօսք ևս ասելու : Ահա ինչէի ուզում ես ասել. Մերիին և Նունէին ես այն

մտքով վեր առայ ինձ մօտ, որ դուք և էդուարդը ազատ լինէիք, տանու պարապմունքի համար. նոքա իմ տանս այնպէս կ'պահպանուին և ուսում կ'առնեն ինչպէս իմ որդիք : (Նա չ'յիշեց, որ Ֆանին պէտք է տայ նոցա դասերու փողը) : Ես կ'սիրեմ նրանց. նոքա լաւ աղջկերք են և ինձ մօտ ամենայն բանով բաւական կը լինեն. ուրիշ ոչինչ չեմ կարող անել և չեմ ուզում ոչինչ խոստանալ : Դուք, կարծեմ, ասացիք, որ ձեր երեխերքը չեն իմանում, որ իւրեանց հայրը բանտումն է :

— Ո՛չ, ես չվստահացայ նրանց այդ ասելու :

— Ի զուր : Նոցա համար այդ օգտաւէտ կ'լինէր, և կ'իմանային, թէ մինչև որտեղ է հասցնում անհաշիւ լինելը և կամակորուժիւնը : Բայց թող այնպէս լինի, ինչպէս կուզէք : Ինձանից չեն իմանալ այդ : Բաւական էք արդեօք դուք :

— Շնորհակալ եմ ձեզնից : Դուք վեր առաք երեխերանց իւրեանց մօրից, կրկնում եմ ձեզ, այդ — սուրբ պարտաւորութիւն է : Յիշեցէք որ դուք խոստացաք նոցա սիրել և պահպանել. Աստուած լսեց ձեր խոստմունքը և կ'պահանջի ձեզանից հաշիւը. հաստատութեամբ ասաց շեղինէն :

Անցաւ մի տարին : — Տխրալի կ'լինէր պատմել մանրամասն շեղինէ Աշտօնի այս միջոցուայ անցած կեանքը : Նա առաջին անգամն էր ծանր նեղութեան և աղքատութեան մէջ : — Աւարտելով ուսումը նա ուղիղ

մտաւ հարուստ զօրապետուհի կասիմովի մօտ դաս-
տիարակուհի և գնաց նորա հետ միասին արտասահ-
ման : Ճանապարհորդութեան ժամանակ դաստիարա-
կուհիի աշխատութիւնը շատ չէ, ուսումը հետեա-
բար և ճիշտ չէ լինում—բայց ինչքան բաւականութիւն
է ստանում : Զբօսանքները Ռէյնի գեղեցկադիր ափե-
րումը, Շվէիցարիայի սարերում և Նտալիայի աւերակ-
ներումը, պատկերների թանգարաններին և պալատնե-
րին այցելութիւնը—ասա սոքա էին Հեղինէի կեանքը
չորս տարուան միջոցումը :

Առաջին նորա սէրը էր բաղդաւոր, ամուսնական
կեանքը զուարթ, էդուարդը սիրում էր և փայփայում
էր նորան, բայց նորա ազգականների անհամակրու-
թեան վերայ ուշադրութիւն չէր դարձնում, կախո-
ւած չլինելով նոցանից. սիրելի երեխայք, մեծ կարո-
ղութիւն—ուրիշ էլ ի՞նչ կարող էր ցանկանալ մատա-
ղահաս կիներ : Նւ յանկարծ բոլոր քամբախտու-
թիւնները հաւաքուեցան նորա գլխին. հարստութիւ-
նը անհետացաւ, մարդը բանդումն է, երեխայքը հե-
ռացրած են նորանից : Գեղեցիկ է խրճիթը պատմու-
թիւններումը, համեղ է գիւղական ճաշը հարուստ կալ-
ուածատիրոջ տանը, բայց իսկապէս խեղճ տնակի ճեղ-
քերից փչում է թափանցիկ քամին, հնոցը ծխվում է
և աղքատ է ճաշը : Հեղինէն այս բոլորը փորձեց ծանր
փորձերով : Նրանի թէ նորա զրկանքները լինէին մի-

այն նիւթական: Բայց բարոյական էր ցածրութիւնը, որին նա ենթարկվեցաւ, երբ որոնում էր օգնութիւն ազգականների և ընկերների կողմից, որոնց հետ բաժանել էր իր աղ ու հացը, բայց զուր էին աշխատանքները դասեր կամ մի գործ գտնելու ապրուստի համար: Բարեկամ վաճառականները ամաչում էին ընդունիլ իրանց մօտ իբրեւ դաստիարակուհի այն կնկան, որն որ տալիս էր նրանց խնջոյքներ և հացկերոյթներ, անձանօթների հետ դժուար էր ծանօթութիւն պցելը: Փաննին չէր գալիս. հօրեղբայրները չէին ուզում ոչ նորա և ոչ նորա գումարը թողնել Անգղիայից ու շատ աշխատում էին նորան մարդու տալ. բայց Փաննին կամակորութեամբ ընդդէմ էր կենում:

Հեղինէն շատ տխուր էր. Զօնի և Հառիէթի նամակները շատ համառօտ էին և անբաւարարիչ, Մերին չափազանց մատաղահաս էր. ուստի և չէր կարող գրել այնպէս, ինչպէս մայրը ցանկանում էր. հազար անգամ խեղճ մայրը սեղմում էր շրթունքին Մերիի սիրուն զրբած շարքերը և Նունէի խաղխղածը, և նորից ընկրդմում էր մտածմունքի մէջ, նորա սիրտը թռչում էր նոցա մօտ, բայց կարիքը ստիպում էր նորան տանջուիլ բացակայութեան մէջ:

Նա պատահմամբ ծանօթացաւ ամերանոցումը պ. Զէլսկի ընտանիքի մօտ, որնոր իմացաւ նորա պատմութիւնը և հրաւիրեց իրա աղջկերանց դաս տալու.

բայց ընտանիքը շուտով սիրեց նորան և նա այն տան մէջ դառնում էր փոքր ինչ մխիթարութիւն :

Մի անգամ Հեղինէն նստում էր դաշնամուրի մօտ, որ Աննա ջեխկու ածելը լսի, երբ յանկարծ նորա հայրը հիւրասենակի դուռը բաց արեց :

— Ներողութիւն տիկնայք. որ ես խանգարում եմ ձեր դասը, տեսէք, որպիսի թանգազին հիւր է... Աննա ճանաչում ես արդեօք դու քո մօր եղբոր որդուն Բոստիսլաւ Կասիմովին։...

Չէլսկու ետեւից մտաւ մի բարձրահասակ և դեղնցիկ հեծելազօրքի զինուոր, որնոր ժպտելով մօտեցաւ Աննային և համբուրեց նորա ձեռքը. յետոյ բարեկեց անձանօթ տիկնօջ։...

— Ինձ չէ՞ք ճանաչում, Բոստիսլաւ Սերգէիչ. հարցրեց Հեղինէն :

— Ներողութիւն... կարծեմ... չեմ ճանաչում։...

— Յիշում է՞ք դուք Հեղինէ Աշտօնին :

— Օրիորդ Հեղինէ... ներողութիւն... ես ուզում էի ասել տիկին Աշտօն։... Ինչ բաղդաւոր պատահմունք է։ Այս ինչպէս եղաւ. որ ես չ'ճանաչեցի ձեզ տեսնելու օրէս :

— Զարմանալի չէ. մենք տասն և երկու տարի չենք տեսնուել. ես արդէն ծերացել եմ :

— Ընդհակառակն. դուք շատ քիչ էք փոխվել : Միայն իմ մտքովս էլ չէր անցնիլ, որ ես կարող էի հանդիպել ձեզ այստեղ :

— Ի՞նչպէս պատահեցաւ ձեզ դալու մեզ մօտ Մոսկ-
վա :

— Ես տարեկան արձակուրդ ունեմ, արտասահմա-
նումն էի և այժմ դնում եմ Սիբիր մեր ոսկեհանքի
ընկերութեան գործերի համար. ես այստեղ անցուորա-
կան եմ: Ինչպէս ուրախ եմ, որ ձեզ հանդիպեցայ: Ո՞րքան
կ'ուրախանայ լիզան, երբ ես նորան կ'զրեմ:

— Լիզան ինձ մօռացել է:

— Ո՛հ. ամենևին ո՛չ: Քանիցս անգամ մենք ձեզ յի-
շել ենք: Տիվոլէի ջրընկէցի մօտ, Բորգեղէի ամարանոցի
քարանցաւի մօտ... յիշում էք, որքան մենք չարութիւն
արինք:

— Դուք տեսա՞ք լիզային. Ո՞ւր. Ե՞րբ:

— Ես այժմ ուղիղ նորա մօտիցն եմ գալիս, այսինքն
Հռոմից, ուր անցկացրի երեք ամիս. դուք հօ գլատէք,
որ նա ամուսնացաւ Մարկիզ Մարեսկալիի հետ:

— Ինչպէս չէ, նա գրում էր ինձ. բայց ձեր մօր մա-
հաւանից յետ մեր գրագրութիւնը դադարեցաւ: Պատ-
մեցէք ինձ լիզայի վերայ, ես շատ ուրախ կ'լինեմ լսելու:

— Լիզան բաղդաւոր է. նորա ամուսինը լաւ մարդ
է, երեխերքը քաղցր: Նորա անդրանիկը, Զովաննին, բուն
Խաչապի է, կարմրայտ, սև հրացայտ աչքերով: Իսկ աղ-
ջիկը Անտօնիան չափազանց նման է հանգուցեալ հօրը:

Լիզան շատ տխրում է Ռուսաստանի համար. նա
կ'կամենար գալ այստեղ, բայց մարկիզը վախենում է

առաջելից: Բայց այժմ խտալական խռովութիւնները և յեղափոխութիւնները շատ անհանգիստ են անում նրան և շատ կարելի է, որ նա զիջանի:

— Ինչպէս ես կ'ցանկայի տեսնել Վիզային: Բայց ես շատ ինքնասէր եմ, ես շատ ուրախացայ ձեզ տեսնելով և երկարեցի խօսակցութիւնս, այն ինչ անշուշտ բիձէն և նորա աղջիկը նոյնպէս կամենում են ձեզ հետ խօսակցիլ:

— Մնացէ՛ք ճաշելու, այն ժամանակ ամէնքս էլ բաւական կ'խօսենք, ասաց Չէլսկին:

— Շնորհակալ եմ, ես չեմ կարող մնալ. էքուց, Աննա:

— Էքուց:

Աններէ՛ք ինձ դալու ձեզ մօտ, հարցրեց Ասսիմովը:

— Շատ ուրախ կ'լինեմ: Նա ասաց իւր հասցէն:

— Անպատճառ կ'գամ: Ոչինչ մի ասէք ձեր ամուսնուն մեր հանդիպման համար: Տեսնե՛նք. Էդուարդ Պետրովիչը կ'ճանաչի այն երեխին, որի հետ միասին ծննեվի լճի վերայ զբօսնում էր և մազլցում Գորիայի ամարանոցի կիսաքանդ բարձրութիւնների վերայ:

Հեղինէն սեղմեց նորա ձեռքը և գուրս գնաց, ծերունի Չէլսկին պատմեց Ասսիմովին Աշտոնի սնանկութեան պատմութիւնը: Երկու օրից յետ Բոստիսլաւը գտաւ Հեղինէն Աշտոնի համեստ բնակարանը. նա շատ չափազանց հոգսերի մէջ էր:

— Ներեցէք ինձ, Բոստիսլաւ Սերգէիչ, ասաց նա. ես շատ վրդոված եմ — Պէտէրգուրգից զարհուրելի նամակ — իմ երեխերքս հիւանդ են — խելքս վրաս չէ — ես էփուց գնում եմ — այժմ գնում եմ հրաժարական տալու ամուսնոյս :....

— Ներեցէք ինձ ձեզ ուղեկից լինելու :....

— Ո՛հ, դուք չ'գիտէք :...

— Ես բոլորը գիտեմ, ինձ պատմել են : Հաւատացէք, որ ես կենդանի համակրութիւն եմ ցոյց տալի : — Իմ կառքը դրանք կանգնած է. ներեցէք ինձ ձեզ ուղեկից լինելու, և այցելութիւն անելու պ. Աշտոնին :

Հեղինէն սիրով սեղմեց նորա ձեռքը և գնացին :

Տեսնե՞նք, ինչ էր անց կենում այս միջոցին Պետերգուրգում :

Մերին և Նունէն շատ գեղեցիկ և նազելի աղջիկերք էին, ոչ փափկասէր բայց քնքոյշ, նոցա ընտիր բնաւորութիւնը աւելի պահանջում էր սէր և փայփայանք : Զօնի որդիքը՝ տասներեք տարեկան Արաուրը և ինը տարեկան Ալֆրէդը, ընդհակառակն էին առողջակազմ երեխերք, կարմրայտ, ճարպիկ և ուրախ, ուստի և երեխերքը հազիւ համաձայն էին լինում խաղերի մէջ : Երբ որ Արաուրը սաստիկ վազելիս յափշտակում էր փոքրիկ Նունէին և ուսերի վերայ դրած շարունակում էր վազելը բաղի մէջ — Նունէն դողում էր, լաց էր

լինում. Մերին սկսում էր խնդրել ասելով.

— Արտուր, ի սէր Աստուծոյ, թող Նունէին. նա վախենում է: Նա պտտում էր նորան օդումը և դնում գետնի վերայ ասելով. Նրկչոտ աղջիկ, փափկասէր: Յիմար աղջիկ: . . .

Իսկ Նունէն քնջնումն կուճ եկած ահով և դողով նայում էր իր եղբայրների մարմնավարժութեանց վերայ: — Նրբեմն Ալֆրէդի բրգոտ շունը նորա ցոյց տուած նշանով թռչում էր Մերիի քնքոյշ ուսերի վերայ և սկսում էր քրքրել նորա խարտեաշ մանգերը, Մերին կուճ էր գալի, չէր համարձակվում խփել կամ քշել շանը, և միայն երկիւղով խնդրում էր ասելով.

— Ալֆրէդ, կանչիր Մոիզային. Ալֆրէդ, խնդրում եմ, ցաւում է. Ալֆրէդը բաւականին զուարճացած նորա երկիւղով և արտասուքներով յետ էր կանչում շանը: Բայց այս բոլորը լինում էր ոչ չարութեամբ, այլ իրանց երեսայական աշխուժութեամբ և անհամակրութեամբ, երեսերքը մինչև անգամ սիրեցին իրանց հօր-եղբօր աղջկերանց և յաճախ հրաւիրում էին նրանց խաղալու, բայց երկչոտ աղջկերքը առաջուց իմանալով, թէ ի՞նչ է իրանց սպասում, միշտ թաղնվում էին. կամ իրանց հօր-եղբօր և նորա կնոջ հրամանով ակամայ դնում էին. իսկ երբ հնար էլ լինում, փախչում էին իրանց սենեակը: Այս նեղացնում էր տիկին Հառիէտին, որնոր յանդիմանում էր աղջկերանցը ասելով.

— Դուք ամենեւին երախտագիտութեան զգացմունք չունիք. ասում էր նա, դուք բարի աղջկերք չէք, եղբայրները ձեզ փայփայում են, ուզում են ձեզ հետ խաղալ, իսկ դուք փախչում էք քունջը, ինչպէս արջի քոթոթներ :

— Մօրաքոյր, ես վախենում եմ Մոիշայից, համարձակվեցաւ կրկնել Մերին :

— Ամօթ չէ՞ վախենալ փոքրիկ շնից : Դու հօ գիտես, որ նա չի կծիլ, այլ միայն հաչում է :

— Բայց նա խառնեց իմ բոլոր մազերս, նա ինձ ցաւ է պատճառում :

— Ի՞նչ մեծ բան է, մի՞թէ չէ կարելի նորից սանդրել մազերը. — դուք փափկասէր և քնքուշացրած երեսերք էք, ոչ ոքի սիրտը շահել չգիտէք. ձեզ ոչ ոք չի սիրիլ :

Երբ որ տիկին Աշտօնի ծանօթները զմայլում էին գեղեցիկ աղջկերանց վերայ, նա սովորաբար ասում էր.

— Այո՛. նոքա բաղդաւոր են, որ ունին բարի հօրեղբայր, որնոր վեր առաւ նրանց իր մօտ, ուտեցնում է նրանց և հագցնում, ինչպէս իր սեպհական զաւակներուն, թէ չէ. նոքա շատ խեղճ կ'լինէին այժմ, երբ նոցա հայրը քամբադտութեան մէջ ընկաւ : Գիտէք, որ նա բանտումն է. ասում էր նա իր բարեկամ կնոջ ականջումը, — և աւելացնում էր բարձրաձայն. նոցա մայրն էլ աղքատութեան մէջ է, նա ի՞նչ կարող էր անել իր

երեխանց համար : Նոքա շատ քնքուշացրած են — գլխի տէք, ո՛հ ռուսաց կրթութիւն. նոքա շատ հոգսեր են պատճառում. բայց պարոն Զօնը չափազանց բարի է : Յայտնի բան է, ի՞նչ արած, իրաւ շատ դժուար է ուրիշի երեխանց վեր առնելը :

— Ինչո՞ւ նոքա այնպէս լղար են և դեղնած. նկատում էին մի քանի ախկիւններ :

Չեմ իմանում, ինչ է նրանց պակաս, կրկնում էր անբաւականութեամբ տիկին Հառիէար, կարծեմ նոքա կուշտ են և հաքնուած. անշուշտ իրանց տանն էլ աւելի լաւ չէին լինում, իսկ այժմ այդքան էլ չէին ունենալ : Նոքա շատ քնքուշացրած են :

— Կարելի է տխրում են իրանց հօր և մօր վերայ :

— Կարելի է : Ինչո՞ւ էր Էդուարդը մուրացկան թողնում իրա որդկերանցը : Եթէ կամենում էին վայելել քնքուշութիւններ, պէտք է աւելի հոգային իրանց գործերի վերայ : Բայց երբ որ ստիպուած են ուրիշի հացը ուտել, պէտք է լինին երախտագէտ դէպի նա, ովոր կերակրում է նրանց, և չպէտք է լաց լինին, այլ շահեն իրանց բարերարների սիրտը : Աղջկերանց սիրտերը տըխուր էր ամօթից և բարկութիւնից, արտասուքը երկում էր նոցա արտեանունքներում, և նոքա աշխատում էին հեռանալ իրանց սենեակը, որ ազատութեամբ լաց լինեն :

— Ինչ վատ և չար է մեր հարսը : Ես նորան չեմ սիրում, ասում էր Նունէն :

— Մ'ուս, կամայց. ասաց Մերին, ծածկելով նորա բերանը իւր ձեռքով. — դու գիտե՞ս, որ մեր մայրը հրամայեց մեզ սիրել նորան և լսել :

— Մերի, ինչո՞ւ գնաց մեր մայրը. ես առանց նորան չեմ կարող ապրել, ես կ'մեռնեմ. հեծկտալով կրկնեց Նուենէն :

Մերին յիշելով իւր մօր վերջին խնդիրքը երեսին պահպանելու և մխիթարելու մասին ասում էր.

— Մեր մայրը շուտով կ'գայ :

Եւ պինդ գրկելով միմեանց, սկսան երեսերքը լաց լինել :

Նոքա ուրախութեամբ կ'մնային իրանց սենեակումը միայնակ, ուրախութեամբ կ'թաղնվէին ամենայն մարդու ուշադրութիւնից և նկատմունքից, միայն Հառիէտը սիրում էր խաղալ բարերարի դեր և հրամայում էր նրանց ճաշից յետոյ միշտ նստել հիւրասենեակումը, պարապելով իրանց կարով կամ խաղալիքներով, և նոցա այնտեղ եղած ժամանակը նա միշտ գովում էր իւր և պարոն Զօնի առաքինութիւնները :

Այնու ամենայնիւ. Հառիէտը չար և անգութ չէր, բայց սառն և անզգայ էր .

Նա զրկվեցաւ ծնողից երեսայ ժամանակը, մինչև 18 տարին կրթվեցաւ ուսումնարանումը օտար երեսանց հետ և ոչ մի ժամանակ չէր տեսել ծնողաց փայփայանքը, և չէր լսել սիրալիր խօսք : 18 տարե-

կան ժամանակը խնամատարները վեր առան նորան ուսումնարանից և տուին Զօն Աշտօնին. այս ամուսնութիւնն դրամական հաշուով էր. այստեղ սիրոյ վերայ խօսք էլ չէին յիշել. շատ կարելի է, որ դորա համար Հառիէթը սառնասիրտ էր, և ոչ մի ժամանակ չէր տեսել քնքուշութիւն, և սովոր չէր համարել այն կեանքի պիտոյք: Սէրը նորա համար հնարք էր պատմիչների. նա խառնում էր քնքուշութիւնը և զգացողութիւնը դիւրագրգռութեան հետ: Նորա մօտ ամենայն բանը կանոնով էր, այնպէս էլ բարերարութիւնը կանոնով էր դործում և ոչ թէ սրտի դրդմամբ. նա կարող էր տալ փող, հագուստ, ուտելիք — բայց փայփայել չէր կարող և չէր իմանում:

Խեղճ աղջկերանց ներքին տանջանքը, իրանց ցաւը ծածկելու անընդհատ ջանքը այն մատաղ հասակում, երբ ամէն բան պէտք է բաց լինի, երբ զարգացումը պահանջում է բարոյական և բնական կատարեալ ազատութիւն — չէին կարող մնալ առանց ազդեցութեան. նորա լղարում էին, լայն ստուերը շրջապատում էր նոցա մութ աչքերը, ծիւրիչ ջերմը. հիւժում էր նրանց:

Ամառը Աշտօնի ընտանիքը գնաց Պետերհոֆ ամարանոց. բայց զով ծովի օդը, և ոչ էլ կակղիի ու նարնջի անուշ հոտը չէին զուարթացնում Մերիին և Նունէին, ու նոցա դեղին այտերը չէին կարմրացնում:

Նրանց առաւօտները տանում էին այգի, ստիպում էին թռչել թռկի վերայ, գլորել շրջանակներ, բայց Նունէն շուտով թողնում էր խաղը, ասելով, «Ես դարեցայ» և չնայելով դայեակ Անգղիացու հոս յորդորանքին, նստում էր ծովի ափին, գցելով նորա մէջ մանր քարեր, կամ կանչում էր Մերիին և երկուսն միասին սկսում էին վիճակներ գցել գուշակելու համար, թէ արդեօք շո՞ւտ կ'գայ իրանց մայր : Նոցա քնքոյշ աչքերումը փայլում էր ուրախութիւնը, երբ վիճակը դրական պատասխան էր տալի, իսկ հակառակ դէպքումը նոքա հոգոց էին հանում, արտասուքները երևում էին նոցա արտեանունքներումը և Մերին իր քրօջը մխիթարելու համար ասում էր .

— Այդ բոլորը դարդակ բան է. գուշակութիւններին չպէտք է հաւատալ : Նոցա դայեակ տիկին Գօուն չէր կարողանում հասկանալ նոցա երեխայական զարմանալի բնութիւնը, որնոր հեռանում էր խաղերից և զուարճութիւններից. և հաւատացնում էր տիկին Աշտօնին, որ երեխերքը երբէք չեն լինիլ առողջ, եթէ նոքա օրը գոնէ երկու ժամ չեն վազվզել և չեն խաղալ . այս է պատճառը, որ նոքա այնպէս լղար են և դեղնած, որ նոքա չունեն ախորժակ : Տիկին Գօուն կրթել էր մօտ քսան և չորս երեխայ, որոնք ամենքն էլ թարմ էին և կարմրայտ. որովհետև նոքա վազվզում էին և խաղում, ուստի և ախորժակով ուտում էին եղով հաց,

միս ու գետնախնձոր. — բայց այս աղջկերանց վերայ նա
բրիտանական կրթութեան բոլոր եղանակները փորձեց,
այն է, առաւօտը վաղ վեր կացնել, սառը ջուր նոցա
վերայ ածել, և մինչև անգամ անօթի ուտացնում էր
նրանց չոր բլիթներ, որ անգղիական դայեակների գործ
դրած ամէնից լաւ միջոցն է մելամաղձութեան դէմ —
բայց բոլորը զուր եղաւ : Տիկին Աշտօնը յանդիմանում
էր իր տեգոր աղջկերանց ծուլութեան, կամակորու-
թեան և անհնազանդութեան համար. երբ նա հար-
ցնում էր, թէ ինչո՞ւ նրանք չեն լսում և չեն կամե-
նում ուրախանալ, Մերին պատասխանում էր. Մենք վա-
ղեցինք և շատ դադարեցանք, սիրելի մօրաքոյր :

— Անհիմն արդարանալը նշանակութիւն չունի : Ին-
չո՞ւ ուրիշ երեխերքը չեն դադարում : Տեսէք էմիլիա
Տօմպսոնին, կամ թէ Ուարնէրի երեխերանց, ինչպէս նո-
քա առողջ են և զուարթ : Ինչի՞ց է : Էնդուրիցն է, որ
վաղվզում են, խաղում են, ծիծաղում են, ինչպէս որ
հարկաւոր է երեխերանց. բայց դուք էնդուր էք այդ-
պէս դեղին և հիւանդ, որ ոչինչ չէք ուտում և ամե-
նէին շարժմունք չունիք :

Տիկին Աշտօնը և Տիկին Գօուն չէին ուզում նը-
կատել, որ ուրիշ երեխերքը կրթվում էին, գուցէ, ու-
րիշ պայմանների մէջ, որ նոցա առողջութեան և զը-
ուարթութեան պատճառը գուցէ նոցա բաղդաւորու-
թիւնն է. կան երեխերք, որոնց բնութեան համար քաղ-

ցրը խօսքը շարժողութիւնիցն էլ աւելի զուարթարար է
և որոնց համար քնքոյշ փայփայանքը սննդարար բիժս-
տեքսիցն էլ աւելի կազդուրիչ է. բայց նոքա չէին կարող
հասկանալ այս բարակ բաները, որոնք սեպհականու-
թիւն են ռուսական բնաւորութեան : Յայտնի է, որ
ոմանք ոչինչ չեն հասկանում կրթութեան գոր-
ծումը, ուստի և նոցա երեխերքը միշտ յանձնվում են
գերմանացուհիներին և ֆրանսիացուհիներին, իսկ առա-
ւելապէս աւելի կանոնաւոր և ճիշդ Անգղիացուհիներ-
ին. ապա թէ ոչ. ի՞նչ կարող են նոքա դուրս գալ . . .
.

Իսկ Ֆաննին պատրաստվում էր Ռուսաստան գալու
և իր նամակներումը հաստատութեամբ պահանջում
էր, որ Մերիի և Նունէի համար լաւ դաստիարակու-
հի և վարժապետ վարձուին իր ծախսով : Սկզբումը
Հառիէտը ուշադրութիւն չէր դարձնում այս բանի
վերայ, վերջապէս երբ որ ջօնն էլ մի քանի անգամ հը-
րամայեց նորան պարապել իր եղբօր աղջկանց կրթու-
թեամբ—որովհետեւ Ֆաննին իրաւ կարող էր գալ և
հաշիւ պահանջել—Հառիէտը մտածեց, որ աւելի յար-
մար էր աղջկերանցը ուսումնարան տալ, ուր նոքա փոքր
վարձով ամէն առարկաները կ'սորվէին և բացի սրա-
նից Հառիէտը մի անգամ միայն մի օրով տուն կ'գային,
որնոր բաւական կ'կարճէր նորա սեպհական ծախսերը
և կ'ազատէր նրան առանձին դայեակ վարձելու ծան-
րութիւնից :

Եւ այսպէս Մերիին և Նունէին տուին տիկին Շիլ-
լերի ուսումնարանը :

Այս մասին երեխերքը շատ ուրախ էին. որ գոնէ
սաղ շաբաթը կ'անցկացնեն օտար աղջկերանց հետ.
նրանց այնտեղ ոչ ոք չէր նեղացնում : Շաբաթ օրերը
նոցա սիրտը աւելի նեղացած էր լինում. տուն գնալու
միտքը, որնոր ուրիշներուն ուրախացնում էր, — նրանցը
սարսափեցնում էր :

Միանգամ երկուշաբթի առաւօտը Մերին եկաւ
իր հարսի մօտ և խնդրեց հրաման, որ ուսումնարան
չը գնան, էնդուր համար որ տկար են :

— Ինչո՞ւ, հարցրեց տիկին Հառիէտը :

— Նունէի կոկորդն է ցաւում, իսկ իմ գլուխս :

— Դուք միշտ գանգատում էք, ի՞նչիցն է գլուխդ
ցաւում, երևի լաց ես եղել :

— Ո՛չ, հարսիկ, կամենում էր ասել Մերին դողդո-
ջուն ձայնով : ...

— Յայտնի բան է լաց ես եղել, քո աչքերդ կարմիր
են, ահա, այժմ էլ արտասուքդ երևում է, ինչո՞ւ ես
լաց լինում :

Մերին լուռ էր կենում :

— Ես քեզ հարցնում եմ, ի՞նչու համար ես լաց լի-
նում :

— Հարսիկ, ես չեմ լաց լինում :

— Ինչպէս համարձակվում ես սուտ խօսել, ես տես-

նում եմ աչքերումդ արտասուք : Դու ծոյլ աղջիկ ես,
ստախօս ու կամակոր : Նս տեսայ, որ դու երեկ էլ կա-
մակորութիւն արիր և ճաշի ժամանակ ոչինչ չ'կերար :

— Այդ էնդուրիցն է :

— Էնդուրիցն, որ դուք զարմանալի աղջկերք էք. ո-
չինչ բան ձեզ չէ դուր գալիս : Երբեմն սիսեռի թանը
անանուխով չէ դուր գալի ձեզ, և ոչ էլ որեւիցէ ուրիշ
համեղ կերակուր. դու մեծ ես, պէտք է խրատես քը-
րօջդ, բայց դու ինքդ էլ անկարգութիւն ես անում
միշտ : Դու փոքր չես. դու կարող ես հասկանալ, որ բա-
րի ծեղկները հողս են քաշում ձեզ վերայ, որ դուք
կարողանաք մի բան սովորել և ժամանակով ձեր հա-
ցը վաստակել, ձեր հայրը վատնեց բոլորը, ինչ որ ու-
նէր. ուրեմն դուք չէք կարող վաճիկանալ և ծուլա-
նալ, այլ պէտք է աշխատէք : Դուք օրինակը աչքի առ-
ջը ունիք, թէ ինչ կ'նշանակէ ծուլութիւնը և ան-
հոգութիւնը : Երբ որ ձեր բարի հօր եղբայրը ձեզ չէր
ընդունել իր մօտ, դուք պէտք է ման էիք եկել փողոց-
ներում և մուրացկանութիւն արել : Հերիք է, հագն-
վեցէք և գնացէք, կառքը սպասում է դրանը, մի' ու-
շանաք :

Մերին չամարձակվեցաւ պատասխանել և նոքա
գնացին : Բայց երեքշաբթի տիկին Աշտօնը զարմա-
ցաւ և սարեափացաւ, երբ տեսաւ իր դրանը մի կառք,
որից դուրս բերին ձեռների վերայ նորա տեղոր աղջ-

կերանց. դաստիարակուհին, որնոր բերեց նրանց, յայտնեց, որ երեխերքը դեռ երկուշաբթի հիւանդ էին եկել ուսումնարան. բժիշկը ասաց, որ նոքա սաստիկ կարմրուկ ունեն, և տիկին Նիլէրը չէ կարող պահել դպրոցումը, վախենալով որ մի գուցէ հիւանդութիւնը տարափոխվի ուրիշներին վերայ էլ:

Տիկին Հառիէտը զարհուրեցաւ, ուղարկեց բժշկի և պ. Զօնի ետևից: Սա իմանալով բանի զօրութիւնը սաստիկ յարձակեցաւ կնոջ վերայ:

— Ա՛մէն բանի պատճառը դուք էք, տիկին Հառիէտ, ինչ էի՞ք շինում: Ինչո՞ւ թողիք նրանց ուսումնարան, երբոր կարմրուկ ունէին:

— Ես չէի իմանում, որ նոքա կարմրուկ ունեն:

— Բայց ներեցէ՛ք հարցնել, ինչո՞ւ դուք չէիք իմանում: Ինչո՞ւ չէիք նայում: Երեխերքին նայելը՝ այդ կնկայ դործ է: Նս առանց դորա էլ, կարծեմ, բաւական դործ ունեմ: Ինչ է՞ք ուզում ինձանից:

— Ես շատ վախեցայ և չեմ իմանում ինչ անեմ:

— Ի հարկէ, բանը փչացրել էք, և հիմակ չէք իմանում ինչ անէք: Ի՞նչ պէտք է ասէ՞ք հիմակ դուք նոցա մօրը: Նս ինչո՞վ կարող եմ ձեզ օգնել: Նս հօբժիշկ չեմ:

Բժիշկը եկաւ, նայեց երեխերանց, շարժեց գլուխը և ասաց.

— Շատ վատ կարմրուկ է. — մրսել են. — սոցա կազմուածքը շատ թոյլ է. — յոյսը սակաւ է:

— Եթէ չէ կարելի օգնել դրանց. հարցնում էր
Հառիէտը նեղացած :

— Յոյսը փոքր է, կրկնեց բժիշկը :

— Ի՞նչ անեմ :

— Ես խորհուրդ կ'տայի ձեզ գրել նոցա մօրը: Շատ
կարելի է, որ նա ցանկանում է նրանց տեսնել: Եթէ
նա անյապաղ կ'գայ, կարելի է, դեռ նրանց կենդանի
տեսնէ :

— Գրել մօրը, զարհուրելով ասաց Հառիէտը: — Ո՛հ
բժիշկ Սիմսօն: Դուք նրան չէք ճանաչում: Նա շատ
անբարեխառն է: Նա աւելի ևս փնաս կ'տայ նրանց:

— Ես չեմ կարծում, որ մայրը կարողանայ փնաս
տալ, ասաց ժպտելով բժիշկը, որնոր վաղուց ճանաչում
էր այս երկու ընտանիքներուն և ինչպէս տանու բժիշկ
ամենայն օտար մարդկերանցից լաւ դիտէր նոցա բը-
նութիւնները: — Գրեցէք նրան: Ոչ ոք չի կարող նա-
յել երեխերանց այնպէս ինչպէս իւր մայրը: 'Ի հար-
կէ հիւանդութիւնը շատ ծանր է — ես չեմ կարծում,
որ կարելի լինի նրանց օգնել, բայց և այնպէս ո՞վ դի-
տէ:.... Աստուած մեծ է:....

— Ո՛հ, ինչպէս ծանր է վեր առնել օտար երեխե-
րեանց իւր մօտ. ասաց Հառիէտը շատ նեղացած:

— Գրիր նրան ինքդ, ասաց Ջօնը, երբոր բժշկի ա-
սածները իմացաւ: Հիմա նա յիշեց Հեղինէին, ինչպէս
նա գնալուց մի օր առաջ գոռոզութեամբ կանգնած
ասում էր. —

Դուք վեր առաք երեխանց իւր մօրից. Աստուած ձեզանից կ'պահանջէ հաշիւ:— Զօնը շփոթած զգում էր, որ ճշդութեամբ չէր կատարել իւր խոստմունքը, որ, ինչպէս հարկաւոր էր, այնպէս չէր հոգացել խեղճ երեխանց վերայ, և էնդուր համար էլ ջերմեռանդութեամբ ցանկանում էր բոլոր յանցանքը գցել իւր կրնկայ վերայ ասելով.

— Աճէն բանումը դու ես մեղաւորը: Ես բոլորն արեցի, ինչ որ կարող էի. կերակրում էի, հագցնում էի այս երեխանց, բայց նրանց պահելը և նայելը-քո գործըն էր, հիմակ ինքդ պատասխանիր շեղինէին, ինչպէս գիտես:

Տիկին Հառիէթը ասում էր.

— Ո՛հ, ինչ ծանր է օտար երեխանց վեր առնել իւր մօտ:

Զորեք-շաբթի առաւօտը պարոն Զօնը հարցրեց իւր կնոջը, զրեց նա արդեօք հարսին նամակ:

— Ես արդէն զրեցի երեք օր առաջ. պատասխանեց Հառիէթ:

Բայց, մինչև ցայժմ... սկսաւ Զօնը:

— Ի՞նչ հարկաւոր է շտապեցնել վատ համբաւի հաղորդումներ, ընդմիջեց Հառիէթը: Ի՞նչ հարկաւոր է նեղացնել խեղճ կնկան: Նա առանց դորա էլ բաւական տառապանք ունի: Այս կիրակի կրկին կ'գրեմ. կարելի է մինչև այն ժամանակ երեխերքն էլ փոքր ինչ լաւ լինեն:

— Բայց եթէ ոչ :

— Եթէ ոչ, այնպէս էլ կ'զրեմ : — Ինչէ. նա հօ յաւ
րու թիւն չի տալ նրանց : Նա անչափաւոր է : — Ոչինչ
չի կարող համբերութեամբ տանել : Շատերի դաւակ-
ներն են վախճանում : ... Բայց Ռուսաց կանայքը ամե-
նև ին հաստատամտութիւն չունեն : Նոքա միայն լաց
լինել են իմանում : ...

Հեղինէն ամբողջ տարին կերակրվում էր իր ձեռ-
քի աշխատանքով . նա համբերեց դառն բաժանման
իւր երեխերանց և ամուսնոյ հետ, — բայց Հառիէթը ա-
սում էր, որ նա չունի հաստատամտութիւն : Միշտ
այսպէս են դատում նահատակների վերայ նոքա, որոնք
երբէք չեն տանջվել :

Պարոն Զօնը լռեց. նա շատ լաւ հասկանում էր,
որ իր կնկայ ասածները անհիմն են. բայց նա ինքն էլ
ոչ պակաս վախենում էր դիւրագրգիռ Հեղինէի տեսու-
թիւնից, որնոր, ինչպէս ինքը իր մէջ զգում էր, կ'յան-
դիմանէր նրան և հաշիւ կ'պահանջէր նրանից երե-
խերանց համար : — Այս պատճառով էլ պարոն Զօնը
չէր ստիպում. այլ ուրախ էր, որ ազատվում էր այս թէև
անխուսելի բայց զարհուրելի հանդիպմունքից :

Այն օրը երեկոյեան երկաւ Անդղիայից Ֆաննի Աշ-
տօնը. կարծես թէ ինքն Աստուած ուղարկեց նրան
այս ժամանակին, ողորմելով խեղճ քամբաղտ ընտանի-
քի վերայ : Իմանալով բոլորը, ինչոր պատահել էր, Ֆան-

նին յանդիմանում էր իր եղբօրը և հարսին, ինքն զբո-
րեց նամակ շեղինէին, հաղորդելով իր դալը և երե-
խերանց հիւանդութիւնը— յետոյ տեղաւորվեցաւ իւր
եղբօր երեխերանց սենեակումը և յայտնեց, որ չի հե-
ռանալ նոցա անկողնից մինչև նրանց մօրը կ'յանձնէ :

Հոկտեմբեր ամիսն էր, օրն էր տխուր և խոնավ. մըր-
րիկը բուռն էր, և Նեվայի վերայ օդն էր բարձրացնում
նորա ալիքները. գրեթէ իւրաքանչիւր քառորդ ժամ
մի անգամ արձակում էին թնդանօթներ, ջրի բարձրա-
նալը ցոյց տալու համար : Այս թնդանօթի ձայները
սարսափ էին գցում Գալերնի Գալանի և Վասիլեվսկի
Օստրովի ստորին մասի բնակիչների վերայ : Մանր անձ-
րեք մաղում էր. սալայատակը չէր երևում ցեխի ա-
ռատութենից, ապակիների վերայ ջուրը աղբիւրի պէս
վազում էր. Պետերբուրգի փողոցներումը երևում էին
միայն բաց արած և քամիիցը շուր տուած անձրեա-
կայներ, որոնք քամին բռնութեամբ խլում էր ոտով
մանեկողների ձեռքից, կարծես ապացուցանել կամենա-
լով, որ զուր է տարրներին հակառակելը և ցեխոտ ոտ-
նամաններ ու մինչևի ծունկը վեր քաշած շորեր խեղճ
կանանց, որոնց հարկաւոր գործքերը ստիպել էին դուրս
դալ փողոցը այգալիսի վատ եղանակին. կարելի էր ե-
րաշխաւոր լինել, որ այդ օրը Պետերբուրգումը ոչ մի
մարդ առանց ամենահարկաւոր գործի անից ոտը դուրս
չէր դնիլ :

Սեղանատանը սեղանը ծածկած էր նախաճաշիկի համար. պարոն Զօն Աշտօնը աշխատում էր խաշած միսը նամակի թղթի պէս բարակ կտրտել. նորա ձեռքերը դողում էին, և Անգղիացին, որնոր այնպէս հմուտ է միս կտրելու՞մը, այս օր բոլորովին խակ երևեցաւ այս դործումը : Տիկին Հառիէթը նստած էր սեղանի միւս ծայրումը, և դժուարութեամբ կլանելով խաշած դետ-նախնձորը ահ ու դողով լսում էր կառքերի ձայնը, որոնք անցնում էին Վասիլեվսկի Օստրովի դետափի վերայ, և ամէն րոպէ նայում էր թանգագին ժամացոյցին, որնոր կախ էր արած սեղանատան անկիւնումը : Մարդը և կինը սաստիկ լուռ էին, պարզ երևում էր, որ երկուսին էլ մի և նոյն միտքն էր պարապեցնում : Վերջապէս Հառիէթը ասաց. — Ես շատ վախենում եմ նորա գալստից. Ֆաննին բարկանում է և չէ լսում ոչ մի արդարութիւն : Աւելի լաւ կ'լինէր, եթէ մենք ամենեւին այս քամբաղտ երեխանցը երբէք մեր առն չէինք ընդունել :

— Յայտնի բան է, եթէ ես իմանայի, չէի ընդունիլ նրանց. բրդրդաց պարոն Զօնը : — Ես քեզ վերայ յոյս ունէի. Ֆաննին նրանցը փաթաթեց իմ վզին, ուստի և իրաւունք չունէ յանդիմանելու : Ես ոչինչ չէի խնայել, որ այս բանը մեզ չ'պատահէր : Ի՞նչ կ'սօսեն այժմ մեզ վերայ :

— Բոլորակ տանդուղի վերայ, որնոր տանում էր վե-

ըին յարկը, լավեցաւ ոտի ձայն. Հառիէթը ասաց.

— Այս բժիշկ Սիմսոնն է. հրաւիրիր նրան նախա-
ճաշելու. ես հաւաստի եմ, որ նա (Հեղինէ) այսօր կը
գայ. ես չեմ կամենում միայնակ նրան հանդիպել:
Խնդրիր բժշկին այս տեղ մնալու:

Մինչև որ պարոն Զօնը նստադրեց բժշկին սեղա-
նի մօտ, և յարգեց նրան ածելով բաժակումը բուն
անգղիական պորտեր, յանկարծ զանգը յուսահատու-
թեամբ խփեցաւ. առաջ քան թէ տիկին և պարոն
Աշտօնները կարողացան ուշքի գալ Հեղինէն արդէն
բարձրանում էր սանդուղի վերայ: Բժիշկ Սիմսոնը վա-
ղուց ծանօթ էր նորա հետ, նա Հեղինէի տանու բժիշկն
էր, երբ սա բնակում էր Պետերբուրգում... — նա շտա-
պով նորա առաջ գնաց, և սեղանատան դուռը բաց
անելով ասաց քաղցրութեամբ:

— Ողջոյն քեզ տիկին Աշտօն. հրամայեցէք ներս:

— Զաւակներս որտեղ են, զաւակներս: Բղաւեց Հե-
ղինէն:

— Դեռ այստեղ հրամայեցէք, փոքր ինչ կերէք,
տաքացէք, ասաց անհաստատ ձայնով Զօնը, ձեռը
նրան ձգելով. բայց նա յետ քաշեց իր ձեռքը, նայեցաւ
նորա վերայ և կրկնեց.

— Ո՛ւր են զաւակներս: Ի՞նչ է նրանց պատահել:

— Լսեցէք ինձ, ասաց բժիշկ Սիմսոնը, ցաւելով Զօ-
նի վերայ, որնոր Հեղինէի խօսքերից դողաց: Սա նա-

յեցաւ նորա վերայ և կարդաց նորա աչքերումը այնպիսի ցաւակցութիւն, որ սիրտը դողաց, նա դեղնեցաւ, բղաւնց այնպիսի յուսահատութեամբ, որ մինչև անգամ բժիշկը սարսափեցաւ, որնոր սովոր էր տեսնել լու մարդոց տանջանքը. Հեղինէի սիրտը դնաց :— Բայց երկար չ'քաշեց այս բաղտաւոր անդգայութիւնը. սիրտը այնքան վերաւորված էր, որ չէր կարող տանջվել առանց դիտակցութեան. մէկ քանի ըռպէից նա ուշքի եկաւ, և բռնելով բժշկի ձեռքը հփփաց .

— Մեռա՞ն... Նրկո՞ւմն էլ.....

— Ո՛չ, ո՛չ :

— Բայս ո՞րը, ո՞րը վախճանեցաւ :

Նա դողում էր բոլոր մարմնով և այնպիսի յուսահատութեամբ նայում էր բժշկի վերայ, որ սա այլ և.ս չ'համարձակեցաւ հարցը փոխելու և ուղղակի պատասխանեց. «Նունէն» :

Նա լաց եղաւ, յետոյ թողեց բժշկի ձեռքը և լուռ նստաւ աթոռի վերայ : Մէկ ըռպէից յետոյ նոյն անբնական հփփանքով հարցրեց.

— Ո՞րտեղ է Մերին :

— Վերեն է, իր սենեակումը. բայց զգոյշ կացէ՛ք, որ չ'վախացնէք նորան... Հեղինէն ցնցողական կերպով շարժում էր ձեռքերը :— Հանգստացէ՛ք, և հաստատուն եղէ՛ք, ասում էր բժիշկը :

— Ես հանգիստ եմ, պատասխանեց նա զարմանալի

դէմքով . — իմ սիրտս սառնացել է, ես հաստատուն եմ
ինչպէս քար :

— Տիկին Հեղինէ, հաւատացէ՛ք... սկսաւ Զօնը, բայց
նորա ձայնից սարսափեցաւ Հեղինէն և ասաց բարձրաձայն.

— Խնդրեմ . լռեցէ՛ք, ես կ'ուշաթափվեմ : — Ես դեռ
չեմ տեսել իմ զաւակներուս... ոչ մեռածին... և ոչ մեռ-
նողին... դեռ տեսնեմ նրանց և յետոյ կ'սօսենք : Հիմա կ'
թողէ՛ք ինձ . ասաց նա հաստատութեամբ, յետոյ Զօ-
նին և բժշկին հեռացնելով . գնաց վերև սանդուղի վե-
րայով, չ'նայելով իւր հարսին . որնոր, դեղնելով վա-
խից, կանգնած էր դրան միջին, չ'համարձակվելով ոչ
իւր սենեակը գնալ, և ոչ մօտենալ Հեղինէին :

Բժիշկը հասաւ խեղճ կնկան սանդուղի վերայ .
և ձեռք բռնած տարաւ և բաց արեց սենեակի դուռը,
որտեղ որ բոլոր վարագոյրները կախ էին արած : Այս
տեղ, փոքրիկ անկողնակալի վերայ, պարկած էր Մերին .
հիւանդութիւնը այնպէս փոխարկել էր նորա քնքոյշ
պատկերը, որ միայն մայրական աչքը կամ լաւ է ասել
միայն մայրական սիրտը կարող էր ճանաչել նրան . աչ-
քերը, որոնց շուրջը կապտացել էր, ներս էին ընկել և
փակվել . նա ծանր շնչում էր, չէր քնած և պարկած
էր զարհուրելի անյիշողութեան մէջ, կարծես մահո-
ւան ձեռքը նորա վերայ էր արդէն : Հեղինէն զարհու-
րեցաւ և երեսը խաչակնքելով մօտեցաւ անկողնին, ե-
րեսը ձեռներով ծածկած ծուկը իջած կար ֆաննին :

Երբ Հեղինէն մօտեցաւ, նա վեր կացաւ և բռնելով նորա ձեռքը շտապով ասաց.

— Մի բարկանար և մի անիծիր ինձ : Ես ինքս ցանկանում էի նայել սոցա, ամենայն կերպիւ շտապում էի, շատ դժուարութեամբ ազատվեցայ հօրեղբօրիցս, դիշեր ցերեկ գալիս էի, Աստուած ինքն տեսնում է — ես ուրախութեամբ կ'տայի կեանքս, սոցա ազատելու համար, ինչոր եկել եմ, չեմ հեռացել այս սենեակից . . . և այն զարհուրելի գիշերը... իմ ձեռներուս վերայ : . . .
Նա չ'վերջացրեց խօսելը, երեսը դարձրեց և սկսաւ արտասուք թափել : Նորա խօսակցութիւնից Մերին զարթեցաւ, բաց արաւ աչքերը և տեսաւ իւր մօրը : Կարծես թէ բոլորովին առողջացաւ, նա յանկարծ նստեցաւ գողինքի վերայ և ձեռները ձգելով բղաւեց .

— Մայրիկ . . . Մայրիկ :

Մայրը և աղջիկը արդէն գրկած ունէին միմեանց, և պինդ ճմլում էին մէկ մէկու իրանց գրկումը, շուտով Մերին թլացած ընկաւ բարձի վերայ, և իր մօր ձեռքը իր լղար թաթիկներումը ճմլելով ասաց.

— Մայրիկ, դուք այլ ևս չէք երթալ. ի սէր Աստուծոյ. ինձ մի' թողնէք .

— Երբեք, իմ հրեշտակ. երբեք այլ ևս չեմ բաժանվիլ քեզանից. երբ ես կերթամ, քեզ էլ կ'տանհեմ հետս :

— Մայրիկ, Նունէն մեռաւ, ասաց շտապելով Մե-

րին, կարծես կամենում էր յայտնել սրանով բոլորը, ինչոր սրտումը կար։ Երևում էր, որ նա դժուարութեամբ էր խօսում։—Ո՛հ մայրիկ, ինչպէս մենք դժբաղտ էինք, ինչո՞ւ այդպէս երկար ժամանակ դու չէիր գալիս. իսկ հայրս։ Այդ հօ ճշմարիտ չէ, որ նա վատ մարդ է։ Կարող է գալ այստեղ, մայրիկ։

—Այո՛, աղաւնիս. նա շուտով կ'գայ։

—Ես էլ այդպէս էի կարծում. ես երբէք չէի հաւատում դրան. հարսը ասում էր, որ նա վատ մարդ է, որ նա բանդումն է նստած, և որ եթէ մենք չենք սովորիլ, մեզ էլ կ'նստացնեն։

Պաննին հոգոց հանեց, Հեղինէն ցնցողութեամբ ճմլելով ձեռները ասաց կամաց.

—Հանգիստ եղի՛ր, իմ հրեշտակ, քո հայրը երբէք վատ մարդ չէ եղել, հիմա կարող եմ քեզ հաւաստիանել, որ նա շուտով կ'գայ. երկու օրից... դու աշխատիր շուտով լաւանալու, որ նրան չ'նեղացնես, աւելացրեց մայրը համբուրելով իր հիւանդ աղջկան։

—Ես էլ չեմ առողջանալ, ասաց աղջիկը.— ես շատ հիւանդ եմ. ես վաղուց հիւանդ եմ. միայն հարսն չէր հաւատում, նա ասում էր, որ մենք ծուլութիւնից սուտ հիւանդ ենք ձեռնում. որ ուսումնարան չըզնանք. նա ասում էր տիկին Շիլերին էլ, որ մենք ծոյլ ենք և փափկացած, և որ նա մեզ խիստ պահէ։ Նա ամենին ասում էր, որ մեզ, իբրեւ ողորմութիւն, պա-

հումէ, որ մենք առանց նորա մուրացկան կ'լինէինք,
ինչպէս. դու և հայրս :

— Մերի, Մերի, ի սէր Աստուծոյ հերիք է, աղաղա-
կեց Ֆաննին : Հեղինէն լուռ և անշարժ նստած էր և
լսում էր իր աղջկայ դռն պատմութիւնը, բայց նո-
րա դէպ երկինք բարձրացրած աչքերը խօսում էին, և
այն շատ մեծ ճարտարութեամբ...

— Դուք այստեղ էք, հօրաքոյր Ֆաննի, հարցրեց հի-
ւանդը. — սիրելի հօրաքոյր, տուէք ինձ ձեր ձեռքը :
Ափսոս, որ դուք վաղ չեկաք. այն ժամանակ դուցէ
Նունէն էլ չէր մեռնիլ : Ամենքը մեզ թողել էին, ա-
մենքը մեզ մօռացել : Հեղինէն շուտ վեր կացաւ. նորա
շունչը կտրվում էր, սիրտը կարծես պատռվում էր
վրդովմունքից : Բժիշկ Սիմօնը, որնոր բոլոր ժամա-
նակ կանգնած էր պատուհանի մօտ, տեսնելով նորա
երեսի վարհուրեցնող գծագրութիւնը, մօտեցաւ ան-
կողնին և ասաց քաղցրութեամբ.

— Օրիորդ Մերի, թէ որ սիրում էք դուք ձեր մօ-
րը, մի' նեղացնէք նրան, նայեցէք, նա հազիւ կենդանի
է. ես նրան չեմ թողնիլ սենեակումդ մնալ, թէ որ դուք
կ'շարունակէք շատ խօսելը :

Ո՛հ, մի' դուրս գնացէք, մայրիկ... ես հանդիստ կը
լինեմ, ես ոչ մի խօսք չեմ ասիլ... հօծաց հիւանդը :
Նա թալկացաւ, բոլոր օրը և բոլոր դիշերը Հեղինէն
և Ֆաննին նստած էին Ռեռնոդի կողինքի մօտ, որնոր

ուշաթափութեան մէջ արտայայտում էր բոլոր տար-
ուան նեղութիւնները : Միշտ տխուր և լուռ է եղել
Զօն Աշտօնի տունը. իսկ այժմ նա նման էր բոլորովին
գերեզմանի. պարօնները և ծառաները ամենայն զգու-
շութեամբ փոխում էին իրանց քայլերը հարուստ գոր-
գերի վերայ. Զօնը և Հառիէթը հանդիպում էին և
բաժանվում միմեանցից, առանց մի խօսք ասելու :

Առաւօտը վաղ բժիշկը այցելութիւն արաւ իր
հիւանդին. նա մեծ փոփոխութիւն գտաւ նորա մէջ.
տաքութիւնը քչացել էր. տենդը վերջացել. Մերին
պարկած էր անզօր և թլացած. բայց լուսադէմին նորա
քունը աւելի հանգիստ էր : Այսօր առաջին անգամ
բժիշկի մէջ զարթեցաւ յուսոյ ճառագայթ. կէս օրին
նա կրկին եկաւ, բերելով հետը իր ուսումնական եղ-
բայրակիցներէց մէկին և ուշադրութեամբ խորհրդակ-
ցելից յետոյ վճռեցին, որ այնուհետեւ յոյս կայ բը-
ժրշկութեան և եթէ հիւանդի զօրութիւնը չափա-
զանց թլացած չէ, կարելի է նորա առողջանալու յոյ-
սը ունենալ : ... Մերին ախորժակով խմեց մէկ բաժակ
թէյ և կրկին քնեցաւ. այդ օրը նա շատ թոյլ էր և
զրեթէ ամենեւին չէր խօսում, այլ միայն շփում էր և
համբուրում իր մօր ձեռները :

Այս իրիկունն էլ Հեղինէն աչք չփակեց, միայն
այժմ նորա սիրտը թեթեւացաւ, նա արդէն աղօթում
էր աւելի զիտակցութեամբ, նա արդէն լսում էր և

Հասկանում, երբ Ֆաննին պատմում էր նրան Նունէի վերջին րոպէների վերայ, Նունէի, որնոր նորա ձեռներումը վախճանվեցաւ, ժպտելով Համբուրեց նրան և ասաց, Համբուրեցէ՛ք իմ փոխարէն մօրս : Այս երկու ծանր օրերը, այս երկու անքուն անցկացրած գիշերներում երկու հարսները բարեկամացան և սրտանց քոյրեր դարձան :

Վերջապէս Էդուարդը եկաւ : Ջօնը բաց էր անում գրասենեակի դռները, որ դնայ իր սենեակները—և ահա անակնկալ կերպով հանդիպեցաւ իր եղբօրը : Ջօնը շարժեցաւ տեղից—նա չէր իմանում, թէ առաջ երթայ, թէ յետ դառնայ... Էդուարդը ոչ մի խօսք չասաց. նորա տխուր դէմքի վերայ չէր երևում ոչ բարկութիւն և ոչ գլարութիւն. այլ արտափայլում էր ինչ որ սարսափելի և հանդիստ—անողորմելի : Ջօնը պատրաստվեցաւ կատաղի յանդիմանութեանց համար. բայց այս խորին և հանդիստ դժգոհութիւնը թէ նախազուշակած չէր և թէ արտայայտած—և հարուստ վաճառականը, որի ձայնը այնպէս վճռական էր վաճառանոցումը, որի տոմսակները նաղդ գրամի գին ունէին—դեղնում էր և դողում իր աղքատացած եղբօր առաջին. որքան էլ նա սիրով կապված էր այս աշխարհի բարութիւնների հետ, որոնք ապահոված և հաստատ էին, այնու ամենայնիւ այժմ իր հաշտութեան կէսը կ'տար, որ միայն կարողանար նայել Էդուարդի աչքերին և համարձակ ձեռքը նրան ձգել :

Էդուարդը գնաց ուղիղ վերև — այնտեղ, ուր տան-
ջվում էր նորա աղջիկը, ուր նորա կինը և քոյրը ան-
համբերութեամբ սպասում էին նորա գալստեան : Մէկ
ժամից նա գնաց ներքև. Զօնը կանգնած էր հիւրասե-
նեակում, գլխակոր թեկն ընկած վառարանի վերայ .
Էդուարդը մօտեցաւ նրան և ասաց .

— Ես նստած էի բանդումը պարտքերիս համար տա-
րի ու կէս. կինս ամէնից թողած և միայնակ կերակ-
րվում էր իր ձեռքի վաստակով : Այն ժամանակը դու
վեր առար իմ զաւակներուս — լո՛ւռ կաց, աւելացրեց
նա ձայնը բարձրացնելով, երբ նկատեց, որ Զօնը ու-
զում էր պառասխանել — լո՛ւռ կաց. մի՛ ընդմիջիր ինձ :
Դու վեր առար զաւակներուս իւրեանց մօրից, դու զը-
ռարձանում էիր նորա տրտմութեամբ և արտասուք-
ներով. դու ուզում էիր կնկանս էլ բաժանել մարդուց,
ուզում էիր նրան ուղարկել հեռու տեղ, որ զրկէիր
ինձ վերջին ուրախութիւնիցս : Դու երեխայ ժամա-
նակուանից չէիր սիրում ինձ, զրկում էիր ինձ — ես բո-
լորը յիշում եմ. — և օգուտ քաղեցիր առաջին դէպ-
քից, որ ինձ ճնշէիր և ոչնչացնէիր : Եթէ քո սրտու-
մը գտնվէր քրիստոնէական սիրոյ գոնէ մէկ կաթիլը
դէպի իր մերձաւորը, դու կ'օգնէիր ինձ, առանց կը-
նոջիցս և զաւակներիցս ինձ հեռացնելու : ...

— Էդուարդ, ես պատրաստ եմ քեզ օգնական լինելու,
ասաց Զօնը հաստատ ձայնով

—Ա՞յժմ... ես դարձայ դէպի քեզ, խնդրեցի քո
օգնութիւնը, դու անխղճաբար մերժեցիր ինձ:... Բայց
հիմակ—ես կարիք չունիմ էլ: Այն, ինչոր ինձ զը-
լացաւ հարազատ եղբայրս, արաւ ինձ համար օ-
տար մարդը: Աասիմովը, որի հետ ես ոչինչ կապակ-
ցութիւն չունէի, բացի երեսայութեան յիշատակու-
թիւններից կամ թէ նորա երեսայական համակրու-
թիւնից կնոջս հետ—Աասիմովը, ինչպէս որ իմացաւ
իմ քամբադտութիւնս, իսկոյն շտապեց ինձ օգնել, ա-
զատեց ինձ, տուեց ինձ դումար և միջոց կրկին տես-
նելու իմ զաւակիս:...

Զօնը նայեցաւ նորա վերայ զարմանալով:

—Աասիմովը. բրտբրտաց նա միտը բերելով — ո՞ր
Աասիմովը: Նա որի մօտ քո կինն է: Մի՞թէ նա այդ-
պիսի մեծ գործք արաւ քեզ համար:.....

—Նա ինքն է: Այո՛ Զօն, նա այդ բոլորը արաւ, և
այն մինչև անգամ առանց իմ խնդրքի, նա ինքն ե-
կաւ ինձ մօտ բանտը և առաջարկեց իր ծառայու-
թիւնը: Իսկ դո՞ւ:....Դու ուզում էիր պարծենալ աշ-
խարհքի առաջին սուտ բարեգործութեամբ, դու ստի-
պեցիր իմ կնոջս ընդունել քո օգորմութիւնը— այն
էլ քեզ չէ պատկանում:

Ֆաննին հօ վճարեց քեզ իմ որդկերանցս հա-
մար.—բայց աշխարհքին յայտնի չէ այս բանը—աշ-
խարհի առաջին դու ես բարեգործը: Համբերիր,—հի-

մակ դու պէտք է լսես բոլորը, ինչոր այսքան ժամանակ հաւաքվել էր սրտումս : Դու ընդունեցիր իմ աղջկերանցս, առողջ և բաղդաւոր — մէկը չ'կայ արդէն : Աստի ինձ, ինչի՞ց մեռաւ նա : Ստացաւ արդեօք Աստուած նրան իր գոգը գոհ, բաղդաւոր, բարի, և հոգացող ազգականներից. թէ՞ նորա կեանքը թունաւորած էր տրամուլթիւններով, արհամարհութիւններով : Չէ՞ն արդեօք նրան երեսով տուել հօր անմտութիւնը : Չէ՞ն արդեօք երեսով տուել կտոր հացը : Գերեզմանը չ'տարա՞ն արդեօք նրան վատ հողացողութեամբ : .. Դու չե՞ս կարող պատասխանել սրանցը : .. Հիմակ լսիր. հարստութիւնը, անունը — սոքա քո կռուքերն են, սոցա համար դու պատրաստ ես հոգիդ ծախելու : Բայց դիտացիր. եթէ ես կ'ընկվեմ վերջին աղջկանիցս էլ, վրէժխնդիր կ'լինեմ քեզնից — ես կը յայտնեմ բոլոր աշխրհին էլ քո ցածութիւնը, քո երեսպաշտութիւնը : Ինքս կ'պատմեմ ամէնքին, որ դու թողիր հարազատ եղբօրդ կորչելու — որ դու հոգեհանարի իմ զաւակներուս : .. Թէ որ Մերին կենդանի կը մնայ — ես կ'խնայեմ քեզ — չեմ անիծիլ քեզ — կ'յիշեմ, որ դու մոռացել ես, թէ մի և նոյն ստինքը սնուցել է մեզ, որ մենք մէկ յարկի տակ ենք մեծացել : — Ես միայն կ'հեռանամ քեզանից իբրև ցածր մարդից, ոչ ոքի առաջին քո անունդ չեմ տալ և քեզ կ'յանձնեմ խղճմտանքիդ : Հիմակ մինչև որ կ'վճռի իմ աղջ-

կանս վիճակը— ես ստիպված եմ մնալու քո յարկի տակը— բայց մենք այլ ևս չենք տեսնվիլ։...

Չօնը կանգնած էր դիտակոր և չէր համարձակվում ընդմիջել յանդիմանութիւնները և մեղադրանքները, որոնք թափվում էին Եղուարդի բերանից։ Ի՞նչ պատասխան տար։ Նորա խղճմտանքն էլ այն էր ասում, ինչ որ իր զայրացած յանդիմանողը.— իսկ Եղուարդը գնաց իր աղջկայ սենեակը և այլ ևս չ'իջաւ այն տեղից, ստիպված լինելով մնալու այդ տանը, նա չ'կամեցաւ իր եղբօր աղուհացը և գնում էր կերակուր մերձակայ պանդոկից։

Ծանր և տրտմութեամբ անց էին կենում օրերը Մերիի սենեակումը, որնոր այնպէս դեղնած անզգայ և հանգիստ էր, որ կարծես անշունչ էր, յաճախ այսպէս էին կարծում հայրը, մայրը և քաննին, որոնք փոփոխակի պահապան էին խեղճ աղջկան։ Նղանակը միշտ խոնաւ էր, անձրեային, անտանելի ծանր հիւանդների համար։ Հեղինէն արդէն կորցնում էր յոյսը. բայց, ընդդէմ ակնկալութեան, երկար և տխուր շրթերից յետոյ մի անգամ բժիշկ Սիմսօնը յայտնեց նրան, որ Աստուծոյ օգնութեամբ վտանգը անցել է։— Մերին սկսաւ կազդուրիլ. թէև ծանր բայց ամէն օր երևում էր, որ նորա զօրութիւնը աւելանում է։

Ո՞վ կարող է նկարագրել հօր և մօր ուրախութիւնը։ Բայց կարելի է նրանցից ոչ պակաս ուրախու-

ցաւ Պաննին : Բժիշկը ասաց սրան, որ աղջկերանց առողջութիւնը խախտվել էր նոցա հասակին անյարմար նեղութիւններից, և որ հենց այդ պատճառով չունեն կարողութիւն տանելու հիւանդութեան : Պաննին յանդիմանում էր ինքն իրան, որ համոզել էր Հեղինէին տալու իր զաւակներուն եղբօր տուն և չէր կարողանում տանել այն մտքին թէ, որքան մեծ պէտք է լինէր յուսահատութիւնը, եթէ նոքա զրկէին իրանց վերջին աղջկանից :

Պեկտեմբերի վերջին թեթեւ սառը զովացրեց և մաքրեց օդը : Վաղուց ծածկված արեգակը պատառեց սպիտակ թանձր ամպերը և սահում էր մոյզ — կապոյտ երկնակամարի վերայ. ուրախութեամբ ողջունում էր նրան բոլոր բնութիւնը. ամէն բան կենդանացաւ. ամէն բան աւելի ազատ սկսաւ շունչ քաշել արեգակի կենսատու ճառագայթների ազդեցութեամբ : Այս կիրակի օր էր : Առաջին անգամ բժիշկը թոյլ տուեց Սերիին վեր կենալու անկողնից. նրան հազցրին, նստեցրին բազկաթոռի վերայ և տարան միւս սենեակը, ուր տեղաորեցին ուղիղ պատուհանի առաջին, որ զուսրճանայ Աստուծոյ լուսով, որնոր այնքան երկար ժամանակ չէր տեսել : — Բաղդաւոր ազգականները նստեցան նորա շուրջը, ուրախութեամբ նայում էին նորանի հար, բայց ժպտող երեսին. կարծես արեգակն էլ ուրախութեամբ լուսաւորում էր զուարթ դէմքերը : Զան-

դռնների ձայնը հնչում էր օդումը հրաւիրելով մարդոց աղօթքի. այս ձայնը բաղդաւորների սրտումը արձագանք էր տալիս և միտն էր բերում նոցա, թէ դէպի ով պէտք է ուղղվի առաջին ժպիտը և ուրախութեան առաջին արտայայտութիւնը :

— Մայրիկ, պատարագ են հրաւիրում. դուք կերթա՞ք եկեղեցին, հարցրեց Մերին :

— Այդ արժանաւորի համար է — այսօր արդէն ուշ է, պատասխանեց Հեղինէն :

— Բայ տանը աղօթք արէ՞ք : Կարդացէ՛ք ինձ համար բարձրաձայն աղօթքներ, մայրիկ, այն-տեղ սեղանի վերայ է դրած աղօթագիրքը, որնոր դուք ինձ ընծայեցիք :

Հեղինէն կատարեց իր աղջկայ ցանկութիւնը. Եդուարդը և Ֆաննին նոյնպէս ծունր իջան և երախտագիտութեան ընդհանուր զգացմունքը միացաւ մի ջերմեռանդ աղօթքի մէջ : Նրբ որ Հեղինէն արտասանում էր խօսքերը. « և թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց » — նոքա բոլորն էլ մէկ մտքով զբաղված նայեցան ահամայ միմեանց վերայ : —

Հեղինէն աւարտեց աղօթքը, Մերին վեր առաւ նրանից գիրքը և սկսաւ թերթել. զննելով նորա մէջ դրած չորացած ծաղիկները. բայց շուտով դադարած գլուխը դրեց մօր ուսին և աչքերը փակեց : Սմէնքը

լուռ էին մէկ քանի ընկած. վերջապէս Ֆաննին վերկացաւ, ձեռնից բռնեց Էդուարդին և տարաւ կամաց պատահանի մօտ :

— Էդուարդ, սկսաւ նա քաղցր և խնդրող ձայնով. — ես վաղուց կամենում էի քեզ հետ խօսիլ, բայց դու այնպէս նեղացած և վրդոված էիր, որ ես չէի համարձակվում... սկսել այս խօսակցութիւնը : ... Հիմա դու բաղդաւոր ես և նախազգացմունքը ինձ ասում է, որ կ'համաձայնես իմ խնդրքին :

Նա յառեց աչքերը եղբօր վերայ, որ եթէ կարելի է, կարդայ նորա աչքերում պատասխանը. բայց Էդուարդը նայում էր նրան հարցական կերպով — երեւում էր, որ նա չէր հասկանում, թէ ինչու մնէ բանը :

— Ես չեմ համարձակում արդարացնել քո առաջին եղբօրս, Էդուարդ, իմ սեպհական սիրտս աշկարայ մեղադրում է նրան. անցեալն անդառնալի է : —

Յայտնի բան է... նորա ձայնը դողդղաց : Հեղինէի արտասունքները սկսան թափել. Էդուարդը երեսը դարձրեց : — Անցեալը անդառնալի է, կրկնեց Ֆաննին — բայց ապագան կամ գոնէ ներկան մեզանից է կախած : Զօնը խնդրեց ինձ ասել քեզ, որ նա պատրաստ է անելու ամենայն զոհաբերութիւն, որ ուղղէ իր յանցանքը քո դէմ : ...

— Ո՛չ մի ժամանակ չեմ ներիլ նրան : Երբէք մի արտասանիլ նորա անունը. զայրութեամբ ասաց Էդու-

ւարդը և կամենում էր հեռանալ. բայց Ծաննին բռնեց նորա ձեռից, և միւս ձեռը նորա ուսի վերայ դրած, արտասուելից հայեցուածք զցեց նորա վերայ և քաղցրութեամբ ասաց .

— Խնայիր, Էդուարդ : Մի եղիր անողորելի : Յիշիր մեր մօր վերջին օրհնութիւնը. նա կտակեց մեզ ապրել սիրով : Աստէիր արդեօք դու այդ խօսքերը նրան — դու, որ նորա սիրելի, քնքոյշ — սիրելի որդին էիր...

Չայրացած Էդուարդը աչքերը ներքև կորացրեց, մօր յիշատակութիւնը չափազանց ներդործեց նորա վերայ, Ծաննին նկատեց այս և շարունակեց իր պահանջը, աւելի յամառութեամբ :

— Խղճա՛ եղբօրդ, ներիր նրան, Էդուարդ, ինչպէս Աստուած քեզ խնայեց : Դու արտասունք թափելով խնդրեցիր նրանից, որ ողորմի քո աղջկան — նա ողորմեց : Միւսը, — նա դողում էր ինչպէս տերև, դրեց դրուխը Էդուարդի ուսի վերայ — միւսը երկնքումն է : Նունէն այժմ Աստուծոյ գոգումն է : Հեղինէն հեծկլտաց, Էդուարդը սարսափեցաւ :

— Ձեռը վեր ա՛ռ ինձանից, Ծաննի՛, ասաց նա կամաց, մերժելով նրան. — դու ողորմութիւն ես խընդրում — բայց ինչո՞ւ ես յիշում իմ առաջին աղջկանս, որին եղբայրս տանջեց, սպանեց։... Մի՛թէ դու կարծում ես, որ ես կարող եմ մօռանալ։ . . .

— Ո՛չ, ո՛չ. Տօռտոռալ այդ անհնարին է. — բայց դու կարող ես ներել :

— Երբէք, երբէք : Ես չեմ անիծիլ նրան. բայց նորա տնից դուրս գնալիս, շեմքուժը թափ կ'տամ ոտիս փոշին — և մէկ էլ կ'տեսնվեմ նորա հետ — գուցէ միայն Աստուծոյ դատաստանի առաջին :

— “Եւ թող մեզ զպարտիս մեր որպէս և մեր թողուժք մերոց պարտապանաց.” — ասաց կիսաձայն Սերին, որնոր կրկին թերթում էր աղօթագիրքը : Եղուարդը զարհուրեցաւ, աղջկայ մեղմ ձայնը, կարծես, չէր երկրային. նա պատրաստ էր ընդունել իբրեւ հրաշք պատահմամբ արտասանած սուրբ խօսքերը — ընկաւ աթոռի վերայ և դառն արտասուեց :

— Սիրելի Եղուարդ, շարունակեց Ֆանին — համողվիր քո աղջկայ անմեղ ձայնից. այն ահեղ դատաստանումը դուն էլ կ'խնդրես Աստուծոյ ողորմութիւնը — այժմ իսկ ապահովիր Աստուծոյ ողորմութիւնը քեզ համար — ներիր քո շատ յանցաւոր եղբօրդ. ինչպէս դու այժմ կ'ներես եղբօրդ — այնպէս էլ Տէրը կ'ներէ քեզ դատաստանի օրը : ...

Հեղինէն մերձեցաւ և զրկելով մարդուն ասաց. — ներիր, ներիր : Ես սրտանց ներում եմ : ...

— Հեղինէ, Հեղինէ. . . ասում էր Եղուարդը արտասուք թափելով և նրան իր զրկումը սեղմելով. — նորա խնցիկն զաւակիդ և դու նոցա համար խնդրում ես :

— Աստուած մէկին խնայեց, միւսը նորա մօտ է. ա-

ասաց նա ընդ միջով ձայնով : — Օրհնենք նորա ողորմութիւնը և մեր զրկանքները իբրև շնորհակալութեան զոհ նուիրենք իրան : Նա կարող էր երկուսին էլ խըլել... բայց ողորմեցաւ... լինենք ուրեմն և մենք ողորմած, ինչպէս մեր երկնաւոր Հայրը :

— Հայրիկ, ներիր նոցա, հօծաց Մերին, թէև չէր հասկանում քանի էութիւնը. նա միայն տեսաւ արտասուքը, լսեց, որ պաղատում են ներողութեան համար. ուստի և իր խնդիրքն էլ աւելցրեց նոցա խընդիրքների վերայ :

— Ո՛հ, Աստուած իմ, Աստուած իմ, որպիսի փորձութիւն է, աղաղակեց Եղուարդը :

— Եթէ դու սիրում ես ինձ, կրկնեց Հեղինէն :

— Հեղինէ՛ Հեղինէ՛, ի՞նչ ես խնդրում :

— Որ դու մաքուր սրտով ներես եղբօրդ. պատասխանեց նա հաստատութեամբ :

— Թող այդպէս լինի... ներում եմ ասաց նա ծանրութեամբ. — միայն քեզ համար, Հեղինէ :

— Ո՛չ, Աստուծոյ համար. ասացին միասին Հեղինէն և Ֆաննին գրկելով նրան, արաասուքը աչքերումը :

Ֆաննին դուրս գնաց սենեակից և մէկ քանի բոսիկից վերադարձաւ. նորա ետեւից գնում էր Զօնը վրդոված, տխուր և աչքերը գետնին գցած : Առանց մի խօսք ասելու եղբայրները պինդ գրկեցին միմեանց. առաջին անգամ նոցա կեանքում եղբայրական գրկա-

խառնու թիւնը փոխարինեց անդղիական սառն ողջոյնը։
Նոքա հաշտվեցան— ես չեմ ասում, որ նոքա սերտ
բարեկամներ դառան, նոքա գէն ձգեցին հինաւուրց
առեղութեան բեռը, մի խօսքով սրտանց հաշտվեցան
և բաժանվեցան միմեանցից թեթեւացած սրտով։

Էդուարդ Աշտօնը, Կասիմովի մեծահոգի օգնու-
թեամբ, կարգի բերեց իր խանդարված գործերը. վա-
ճառատունը «Աշտօն և ընկ.» անունով ծաղկում է
մինչև այժմ էլ և մեծ վաճառականութիւն է անում
արտասահմանի հետ։

Եթէ ձեզ պատահել է այս ձմեռվան վերջին լինել
վաճառականաց ժողովատան խնջոյքումը, անշուշտ նկա-
տած կ'լինիք մի գեղեցիկ օրիորդ սպիտակ պատառեայ
շորերով. նորա բարակ մէջքին կապած էր վարդագոյն
արծաթապատ ժաշաւէն, որի լայն ծայրերը կախ էին
ընկած ներև, ճոխ խարդեաշ մազերը ծածանվում էին
նորա այտերի և մերկ ուսերի վերայ, նոքա զարդարած
էին կիսաբաց վարդերի փունջերով։ Նա շարունակ
պար էր գալի մի բարձրահասակ ճարպիկ հեծելազօր
կապիտանի հետ կամ նստում էր սիրուն Գիկնոջ մօտ,
որնոր իր հայեցուածքը նրանից չէր հեռացնում և
կարծես զուարճանում էր նրանով։ Մատաղահաս օ-
րիորդի գեղեցկութիւնը, նորա շնորհքը, բայց ամէնից
աւելի այն դիւթական խօսքերը թէ նա հարմարեալ է.

դարձնուժ էին նորա վերայ ամենքի ուշադրութիւնը :

Այս գեղեցիկ խարտեաշ օրիորդը — էր Մերի Աշտօնը, իսկ նորա փեսայացուն էր Հեծելազօր Ռօստիսչաւ Սերգէեւիչ Կասիմովը :

Բայց պարոն Զօնը և նորա ամուսինը : Նորա գործունքին 1854 թուականին բոլորովին տեղափոխվեցան Սնգղիա :



3916

2013

